



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

7-24

ԱՍԻԼ ՀԱՅԱԿ

Բ Ե Ա Թ Պ Ի Զ Ե

Ա Ե Պ Ի Ա

Գերմանիկէնից Թարգմանից

ՓԻԼԻՊՈՓՈՍ ՎԱՐԴԻԱՆԵԱՆ



ԹԻՖԼԻԶ
ՅՈՒՆԵՆՔԱՄ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱԾ
ՕՐԲԵԼԵԱՆ ՓԱԳԱՅ, № 1, 2



1891

83
2-24

1-4

10/2006

42
1368

ՊԱՌԻԼ ՀԱՅԱԿ

Բ Ե Ա Թ Ռ Ի Զ Ե

Ա. Ե. Պ Ե Կ

Գերմաներէնից Թարգմանեց
ՓԻԼԻՊՈՎԱՍ ՎԱՐԴԱՆԵԱՆ

Թ Ի Ֆ Լ Ի Զ
ՅՈՎ. ՀԱՅԱԿԱՆ ՄՊՈՔՏԵՐՈՒՅԵԱՅԻ ՏՊՈՒՄ
ՕՐԵԼԵԵՎԻ ՓՈՎԱՅ, № 1, 2-

1891



Дозволено цензурою. 31 Января, 1891 г. Тифлисъ



Тифл. №. Марти осіанца, Орб: ул., д. 1/2.



1-602ач



Բ Ե Ա. Թ. Ռ Ի Զ Ե

Հայրս որ մեռաւ՝ ես քսանեհինգ տարեկան տղամարդ էի. Նրա մահուան տաղնապն ու հոգեվարքը որ տեսայ, կարծես թէ տասը տարով ծերացայ:

Այս պատահարից փոքր ինչ առաջ իմ միակ և սիրելի քոյրն ամսութնային էր մեր առետրական տան ընկերներից մէկի հետ, որի ընտանիքը վաղուց գաղթած էր Ֆընէվ, և որ այժմ իւր անունը միացրել էր մեր Փիրմասին: Մինք հարազատ եղբայրների պէս մտերիմ էինք իրար հետ, և երբ նա ու քոյրս սկսան յորդորել, թէ ինձ անշուշտ պէտք է գոնէ մի քանի ամիս ճանապարհորդել մռայլ թախիծս փարատելու համար, ես սրտի մտօք ընդունեցի այդ իսրհուրդը, մանաւանդ որ ուրիշների օգնութեան կարօտ լինելս ինքս էլ լաւ գցում էի:

Օգի փոփոխութիւնն արդարեւ խոկոյն աղդեց իմ վրայ, որպէս և գուշակել էին մտե-

ըիմներս: Երիտասարդութեան աշխոյժս կրկին վերադարձաւ. աչքերս նորից բացուեցան բնութեան հրաշակերտ տեսարանները զննելու համար, և գեղարուեստական հակումս, որ արդէն դօրացել էր Գերմանիալում ու Ֆրանսիայում, առատ սնունդ ստացաւ Միլանի ու Վենետիկի մէջ, ուր ես նախ և առաջ դիմել էի յետոյ քայլ առ քայլ դէպի հարաւ չուելու մտքով:

Սիրտս թռչում էր դէպի Ֆլորէնցիա, և որովհետեւ մտքերս արդէն առաջուց զբաղուած էին այդ քաղաքում ինձ սպասող հոյակապ պատկերներով, ուստի ես շատ քան անտես էի թռղնում ճանապարհիս: Այս էր պատճառը, որ ես որոշեցի միայն մի օր ընծայել Բոլոնիային. որ ես շտապով աչքէ անցրի նրա եկեղեցիները, շուտ շուտ անցաւ թանգարանների միջով և կէսօրից յետով, մի կառքի մէջ ընկած, դուրս ելալ բարձրանալու Ս. Միքայէլեան հին վանքի բըլուրը, որպէս զի իսիդոս Հանգստացնեմ դէթ մի ընդհանուր հայեացք ձգելով վերևից այդ նշանաւոր քաղաքի վրայ:

Ամառուայ ջերմ օրերից մինն էր այն օրը, և որքան էլ ես սովորած լինէլ օդի ամեն աստիճաններին տոկալու, այսու ամենալին նոյն օրուայ կիզիչ տօթը խեղզում ու չլատում էր ինձ իսպառ:

Սուրբ Միքայէլի մենաստանից դէպի քաղաք յետ տանող ճանապարհը բոլորովին ամացի էր: Այգիների պատի ետևից բարձրացող ծառերն ու թռւփերը միանդայաց ծածկուած էին փոշով, կառքիս անիւները թզաքափի խըրպիում էին հրատուցոր աւազի մէջ, թմբքած կառապանս նստարանի վրայ երերուելով հազիւ էր կարողանում իւր հաւասարակշտութիւնը պահպանել, և նրա յոդնած ձին, ականջները վայր կախած, յուշիկ քերպում էր դէպի առաջ ճանապարհի եղերքով, շահուելու համար գէթայն կտոր կտոր ստուերներից, որ այգիներն ու պարտէզները տեղ տեղ ձգում էին փողոցի վրայ:

Ես հանգիստ թեք էի ընկած կառքի մէջ՝ ամպհովանին զլիս բռնած, և զրեթէ նիրհում էի: Յանկարծ մի բան գիպաւ երեսիս և հանգիստս շվաթեց: Արդեօք մի ճիւղ էր այն որ շվեց ինձ... Ես ցնցուելով վեր թռայ և շուրջ նայելիս՝ իմ առաջին հայեացքն ընկաւ մի նունենու ոստի վրայ, որ կենում էր գոգումս և որ անշուշտ մօսաւոր պարսպի ետևից նետուած կըլինէր կառքիս մէջ: Իմ ուժգին շարժմունքից ձին կանգ առաւ. կառապանս դեռ հանդարտ մրավում էր: Այսպէս ես միջոց զըտայ զննելու այն տեղը, ուստի ինձ հարուած

Էին տուել, և շարունակեցի հետազօտութիւնս մանաւանդ և այն պատճառով, որ պարտէզի բարձր ցանկի ետևից պարզ լսում էի մի կայտառ աղջկայ թաքուն ծիծաղ,—աղջկայ, որ կարծես թէ ուրախանում էր իւր ճարտարնենգութեան վրայ: Եւ լիրաւի, գեռ մի քանի վայրկեան էլէք անցել, մինչ ես աչքերս շեշտակի ցանկի վրայ բեռած կանգնել էի կառքիս մէջ, և ահա պատի ետևից մի գանգրահեր գլուխ բարձրացաւ ֆլորէնցեան լայն յարդի գլխարկով: Թաւ թաւ յօնքերի տակից երկու վառվուն աչքեր լարուեցան վրաս և ասլշութեամբ զիտում էին, կարծես թէ ես մի օտարոտի հրէշ լինէի: Բայց երբ ես նունենու սստը վերցնելով բողբոջները շրթունքիս դրի և յետոյ նոյն սստը դէպի գարանակալ օրիորդը ճօճեցի, — յանկարծ նրա չքնաղ դէմքը շառագոյն կարմրով բորբոքուեցաւ և երկութը մի ակնթարթում անհետացաւ, այնպէս որ եթէ ճիւղը ձեռքումս չինէր, ինձ կըթուէր թէ այդ բոլորը մի լոկ երազ էր:

Յուղուած մտքով վալր իջայ կառքից և պարտէզի երկայնքով մի քանի քալլ անելուց յետոյ՝ մօտեցայ վանդակապատ բարձր դրան, որ վակում էր պարտէզը: Հին երկաթի ձողերի միջով ներս նայելիս — դրանք միջնադարեան

պինդ կռածոյք էին—ես տեսայ պարտէզի մի մասն և տունը, որ վակ վեղկերով կանգնած էր ակացիաների ու թեղիների մէջ տեղում: Թօթուեցի դրան վականքը—ըբացուեցաւ, և արդէն աջս դըել էի հնչակին, երբ մի գաղտնի երկիւղ զզացի ոտք դնելու այդ օտար սահմանի վրայ: Եւ որքան ապուշ պիտի երկնալի, եթէ յանկարծ հարցնէին ինձնից ներս մտնելուս պատճառը: Ուստի լաւ համարելով սպասել փոքր ինչ—միշտ լոլո ունէի, թէ ոստ նետող օրիորդը կրկին կ'երկնար մի որ և է անկիւնից,—ես սկսայ ուշագրութեամբ հետազոտել տունը, իբր թէ կամենում էի նկարել նըրան, մինչեւ որ արեւի տապը ստիպեց ինձ վերագառնալ հովանուս տակ: Յետ որ եկայ կառապանը սխափուեցաւ քնից, սանձը քաշեց, և մենք շարունակեցինք յառաջ գնալ—ես միշտ դէմքս յետ դարձրած, թէև գեղուէին ալ ևս չէր երկում:

Երբ որ հասայ «Երեք ուխտաւորի» պանդոկը, յորդ անձրև իջաւ երկնքից և քաղաքի օդն այնպէս զովացաւ զիշերուայ դէմ, որ ես ակամայ գուրս ելայ տանից և գնացի զբունելու երկարաշար կամարների ներքեւ: Զբունելիս ես մտնում էի մերթ մի սրճարան սառ ընդունելու համար, և մերթ որ և է եկե-

ղեցու առջև կանգնած՝ կարդում էի նրա վերանագիրն աղօտ լապտերի լուսով։ Սակայն որքան էլ լոգնած լինէի մաս գալրոց ու նստելոց, դարձեալ մինչև լոյսը չկարողացաւ նիբհել այն զիշեր։ Զէի կարող հաւատալ, որ քունը փախցնողը սիրուն աղջկայ դէմքը լինէր, թէւ նա շարունակ կանգնած էր աչքիս առջև։ Ես միշտ առասպել էի համարել այս բանը, թէ երբեմն հայեացքի մի կայծն անգամ հերիք է, որ հրդեհ ընկնի մեր սրտի մէջ։ Ուստի յուզմունքիս պատճառը վերադրում էի ջղերիս բոբրոք վիճակին։

Սակայն միւս առաւօտ, երբ որ արդէն երեկոյից ապսպրուած հաշիւը բերին և ինձ իւրօք պէտք եղաւ շարունակել ճանապարհս, ես զգացի, որ մի բան քայլս զսպում էր։ Ես մըտածմունքի մէջ ընկայ և լիշեցի, որ ինձ պէտք էր մի ծանօթ վաճառական տեսնել Բօլոնիայում։ Թէւ այս տեսակ բաներում խիզմ շատ զգայուն չէր, բայց այժմ ինձ այնպէս էր թըւում, թէ այդ քաղաքավարութեան պարտքը անշուշտ պէտք էր կատարել։ Յետոյ սկսայ կշտամբել լինքս ինձ, որ միայն վերիվերոյ էիր աչքէ անցրել Թաֆայելի Սուրբ Սեղմիան—թողնենք միւս զանցառութեան մեղքերս։ Այսուհետեւ Բօլոնիա քաղաքը լանկարծ տեսու-

թեան շատ արժանի երկեցաւ ինձ, և Ֆլորէնցիան մնաց երկրարդ կարդում։ Վերջապէս ես իրաւ սկսայ մտածել, թէ իմ որոշման փոխուելու պատճառը մտամբ այն սստ նետող օրիորդն էր։ Զարմանք է, որքան մտարերում էի նրա դէմքի զծերը, այնքան էլ նրանք ջնջում էին, և վերջ ի վերջու միայն նրա աչքերն էին պատկերանում ինձ վառ վառ։ Օրուայ ընթացքում, քանի որ ես ուղևոր մարդու դորձերալ էի զբաղուած, ոչ մի առանձին յուգմունք չէի զգում։ Սակայն երբ ցերեկուայ տօմից յետոյ քայլերս դէպի ամարանցն ուղղեցի, երբ թէ այդպէս անելը մի անհրաժեշտ պարտք լինէր, մի տարօրինակ տագնաալ տիրեց իմ սըրտին, և այժմ էլ գեռ լաւ եմ լիշում, թէ ինչ երգեր երգեցի՝ ինքս ինձ արիութիւն տալու համար։

Ես գուրս ելայ քաղաքից։ Ամեն բան մի և նոյն դրութեան մէջ էր, միայն թէ այս անդամ պարտէղի տունն ամալի չէր։ որովհետեւ այժմ պատուհանների վանդակները բաց էին և պատշամբի վրայ կանգնած էր մի շնիկ, որ ինձ տեսնելուն պէս սկսաւ հաջել։ Այս անգամ էլ չէ համարձակվում զանգակից քաշել։ ասես թէ մի բան սաստում էր ինձ, և լինքս էլ զրեթէ չէլ ուղում նորից տեսնել աղջկայ

երեսը, որպէս զի յաջորդ օրը կարողանալի աւ-
ւելի թեթև սրտով հեռանալ այն քաղաքից:
Այսու ամենայնիւ ես դարձեալ մի անդամ պտը-
տեցի պարտէղի շուրջը, որ բաւական ընդար-
ձաւկ էր և սահմանակից գիւղային տնակներին
ու սիմինդրի դաշտերին: Այնտեղ էլ լուսթիւն էր
տիրում: Հասնելով պարսպի այն մասին, ուր որ
դրան յարակցում էր մի ստոր ցանկ, ես հեշ-
տութեամբ վերև բարձրացաւ և սկսակ համար-
ձակ նայել պարտէղի մէջ, մանաւանդ որ չորս
կողմս ոչ մի մարդ չէր երեւում: Պարտէղի ներ-
սի կողմից մի ահազին կաղնի էր կանդնած իմ
առջեւ: Ես արագ ցատկեցի պարսպի վրայ, ըըռ-
նեցի ներքեւ ճիւղից և մնացի վերեւում:

Աւելի յարմարաւոր տեղ ընտրել չէր կա-
րելի: Ինձանից հազիւ թէ լիսուն քալ հեռու-
երկու ջահիլ աղջիկներ, բնաւ առանց նշմարե-
լու թէ իրենց ետևից նայող կայ, դնդակ էին
խաղում արևակէզ մարդի վրայ, որ այժմ ստուե-
րի մէջ էր: Մէկն ունէր սպիտակ շոր և մի
լայն յարդի գլխարկ, որ արդէն երէկ էի տե-
սել: Նա ոչ մեծ էր հասակով, ոչ էլ փոքր.
Նշենու պէս վայելչակազմ էր ու թուշնի պէս
արագաշարժ: Զէկ կարող մտարերել, որ երբ և
իցէ ալդպիսի շնորհալի երկոյթ տեսած լինէի:
Սև ու դանդուրներն ազատ փուլում էին ուսե-

րի վրայ, մինչ նա ժիր ժիր խաղում էր. երե-
սը զունատ էր, լսկ աչքելն ու ատամնե-
րը փայլում էին, և ձախը զուարթ հնչում,
երբ նա ծիծաղում էր դնդակին մի անյա-
ջող զարկ տալիս. այնուհետև իմ սիրու միշտ
թնդում էր և ցանկը տատանվում ոտքերիս
տակ: Նրա ընկերուէին հագնուած էր համա-
րեա թէ նրա նման, բայց միայն տւելի հա-
մեստ, և երեւում էր, որ մի հասարակ աղջիկ
էր: Ես զրեթէ չէի նայում դրան, որովհետև
բոլոր ուշադրութիւնս ուղղուած էր միւս թո-
վիչ էակի վրայ: Երբ նա բազուկը բարձրացնում
էր դնդակին խփելու համար,—երբ նա անքը-
թիթ վերև էր նայում սպասելով վայր ընկնող
դնդակին,—երբ նա հրամաւում էր դնդակին բարձր
թոփչք տալիս և զլուխը թօթվում մի անյա-
ջող զարկ տալիս,—նրա ամեն մի շարժմունքը
պատանեկան զօրութեան ու կորովի հրապուրիչ
պատկեր էր ներկայացնում: Ես ակներև տե-
սայ, որ բանս պրծել է, և առաջին անգամ
կեանքումս զլխովին անձնատուր եղաւ մի զգաց-
ման, որ բոլորովին տիրացաւ ու բանացաւ իմ
վրայ:

Այդ յափշտակութեան մէջ էի ես, մտա-
ծելով թէ ինչպէս պիտի մօտենափ օրիորդին՝
առանց նրան վրդովելու, երբ յանկարծ մի դի-

պուած — ոչ, իմ բարի բախտը օդնութեան հասաւ ինձ: Նրա գնդակը, կաղնու գագաթից անցնելով, որի տակ ես կանգնած էի, թռաւ ընկաւ մերձաւոր գաշտի վրայ: Օրիորդն անձկութեամբ նայեց ետևեց և արդեօք նշմարեց ինձ թէ ոչ — զգիտեմ. միայն թէ երբ ես արտգարագ վայր իջայ ու գտած գնդակովս կրկին պարսպի վրայ երեցայ, — նկատեցի, որ նա ապշած աչքով, բայց ոչ բարկութեամբ, ուղիղ նայում էր այն կէտին, ուր որ ես էի գարանած: Միւր աղջիկը մի թեթև ձայն արձակեց և ընկերուհու մօտ վագելով՝ մի ինչ որ բան ասաց նրան, որ չհասաւ ականջիս. սակայն շարժմունքից հետեցրի, որ յորդորում էր նրան գէպի տուն փախչել: Սիրունը կարծես ականջ ըզդրաւ ընկերուհուն, այլ հանգիստ սողանում էր, որ ես գնդակը յետ բերեմ: Տեսնելով որ ես յապաղում եմ և ակնապիշ կանդնած եմ, նրա աչքերը հպարտ ու սէդ արտայալութիւն ստացան. նա թօթուեց իւր խոպոպիլքն և արդէն մտադիր էր սառն գէմքով հեռանալ, երբ ես գնդակը բարձրացրի ու մի արագ նշանով աղաքեցի, որ սպասէ: Այն ժամանակ ես հանեցի իմ զգից մի սրտաձև ուկէ մէդալիօն թաւչեայ ժապաէնով, որի մէջ պահուած էին քրոջս մադերը, պինդ կապեցի նրան գոյնզզոյն գնդա-

կին և այնպէս յաջող ձգեցի գէպի առաջ, որ նա զլորուելով գնաց ընկաւ օրիորդի ոտքի տակ, պարտէզի կոպճուտ աւագի վրայ:

Կա հպարտ գէմքով մի քանի քայլ արաւ գէպի ինձ, գնդակը վերցրեց և մէդալիօնը նըշմարելուն պէս մի զուարթ ակնարկ շնորհեց ինձ, որ մինչև ոսկորներիս ուղեղը թափանցաւ: Ընկերուհին դարձեալ բան ասաց նրան. սակայն նա չպատասխանեց, գնդակն ու ոսկու զարդը իւր զբանի մէջ զբաւ և ձեռքում բրոնած փայտովը մի այնպիսի աննման վսեմութեամբ նշան տուաւ ինձ, որ ասես թէ թագուհի լինէր: Յետոյ դարձաւ և առանց միւս անգամ լիւտ նայելու յամբ քայլով տուն գնաց:

Պարոսպի վրայ էլ անելու բան չունէի, և նոյն օրն իսկ երկրորդ անգամ փորձ վորձելը — յանգնութիւն կըլինէր: Եւ ինչ պիտի շահուէի: Ակներեւ էր, որ նա ինձ ճանաչել էր: Իսկ թէ ինչ էր անցնում սրտիս մէջ — այդ նա ինքն էլ զուշակած կըլինէր իմ կըլին երեան դալուց: Ես իմ սիրտը նրա ոտքի տակ ձգեցի, նա վերցրեց, և այժմ այդ սիրտը հանդչում էր նրա ձեռքում: Որդեօք պէտք չէր ժամանակ տալ նրան, որ իւր մտքերը ժողովէ: Ես ինքս էլ այժմ մի այնպիսի տեսնդի մէջ էի, որ եթէ նա ինձ հանդիպէր, ես անշուշտ կըշփոթուէի.

Այն զիշերն էլ քիչ քնեցի, սակայն ոչ մի ժամանակ այնպէս զուարթ չէի զարթել, ինչպէս որ միւս առաւօտը: Թը լուսացաւ թէ չէ, ես գնացի պատկերների սրահը և գրեթէ ամբողջ երկու ժամ նստած մնացի Սուրբ Մէցիլայի պատկերի առջև: Այստեղ իբրև մի ջինջ հայելու մէջ իմ սիրտը քննելով, ստուգեցի որ ոչ մի խաբէական ցնորք չէր շփոթում ինձ, և զգացի, որ իմ մէջ վառուող կայծը արդարև երկնային էր: Հրաշալի էր այն առաւօտը: Ինձ համար ամեն բան դեռ գուշակութիւն էր ու նախաղղացմունք, բայց և այնպէս ես հոգւով զմայլում էի, ասես թէ նա մօտիկ նստած լինէր իմ կշտին և ես նրա սրտի թլնդիւնն իմինի վրայ զգում լինէի:

Գարձեալ սպասեցի, որ կէսօրուայ տօթը մեղմանալ, և յետոյ գնացի դէպի ամարանոցը: Սակայն այս անդամ բաւական չեղալ միւսին ներս նայելով վանդակաւոր դբան միջից, այս հնչակին ուժդին քաշեցի, և բնաւ չվախեցալ, երբ նա անվերջ հնչիւն հանեց: Հաջան շնիկը նորից դուրս վազեց պատշգամբի վրայ. տան ստորին յալկում մի կողմնակի դուռ բացուեցաւ և մի կարճիկ ծերունի, որի բարի դէմքը մի ծիծաղելի ռազմական կերպ էր ստանում իւր ահազին ընչացքներից, — այս անա-

կընկալ այցելութեան վրայ զարմացած՝ եկաւ մօտեցաւ վանդակին: Ես առանց կակազելու ասացի նրան արդէն դնալուս միջոցին անդիր սերտած ասելիքս, — թէ ես իբրև մի օտարագդի ուղևոր, Խոալիալի վրայ մի գիրք շարադրելով, մտադիր էի Բօլօնիալի շրջակայքն էլ նկարազբել, թէ ուրեմն կըցանկայի այս տեղն էլ արագ աչքէ անցնել, մանաւանդ որ ամարանոցը, որպէս մի հին ձարտարապետական շինութիւն, շատ մասերով նշանաւոր էր և ուշագրութեան արժանի:

Ալեսօր մարդը կարծես թէ ոչինչ չհասկացաւ իմ խօսքերից: — Ճատ ցաւում եմ, առաց նա, որ բնաւ չեմ կարող ներս թողնել ձեզ: Այս ամարանոցը պատկանում է Ալէսանդրօ Պ. գորավարին, որի ձեռքի տակ ես էլ մի օր ծառայել եմ, և ձեր հայրենի Զուիցէրիան ինձ լաւ յայտնի է, որովհետեւ ես ինքս էլ եղել եմ այստեղ նապօլէօնի գորքի հետ: Յետոյ՝ երբ տմեն բան վերջացաւ և ես իմ վէրքերը դարձանելու վրայ էի, զօրավարս այս հանգիստ բնակարանն ուղարկեց ինձ և ինքը երկբորդ անգամ ամուսնանալով, — ինդրեց որ ես իւր ազգկայ վրայ ինսամք տանեմ. որովհետեւ ձեզ էլ լաւ յայտնի է, պարսն, թէ ինչեր կարող են պատահել, երբ որ մի երիտասարդ աղ-

ջիկ իւր ջահիլ մօրուից զեղեցիկ է. . . Ալավէն
մենք հանգիստ ապրում ենք այստեղ, և տի-
րուհիս ոչ մի բանի կարօտութիւն չէ զգում,
որովհետեւ հայրը զրեթէ ամեն շաբաթ ուղար-
կում է նրան լաւ լաւ բաներ, և նա ունի ա-
մենալաւ վարժասկետներ թէ երդի ու թէ լե-
զուների համար և, վերջապէս, իմ հարազատ
աղջկայ մէջ մի հաւատարիմ ընկերուհի, որից
լաւը կարող էլ չէ ուզենալ: Միայն թէ նա
քաղաք չէ գնում, և խորթ մայրն էլ նրան
տեսնելու փափագ չունի: Բայց այս հանգա-
մանքը նրան առանձին վիշտ չէ պատճառում,
որովհետեւ սիրելի հայրը ամիսը մի ան-
դամ զայիս է այստեղ իւր աղջկան տեսնելու
համար: Եւ ամեն անգամ կրկնում է ինձ,
որ աչքիս պէս պահպանեմ իւր զաւակին, և
երբ որ տիրուհիս կիրակի օրերը ժամ է դնում,
ես էլ նիւնայիս հետ ուղեկցում եմ նրան և չեմ
թողնում որ հեռանայ լնձանից: Դէհ ինչ էք
ուզում տեսնել այստեղ. հաւատացէք, որ այս
տունն էլ միւս հարիւրաւոր տների նման է.
այգու մէջ էլ մի առանձին բան չէ բուժնում:
Արդ էր պակաս որ դուք բան գրէլք մեր մա-
սին, տեսէք, թէ այն ժամանակ ինչպէս կը-
բարկանայ վրաս իմ տէրը. զուցէ տանից էլ
վունտէ, չնայելով ծերութեանս:

Ես աշխատեցի որքան կարելի է հանգըս-
տայնել նրան, սակայն իմ բոլոր բարի խօսքե-
րից աւելի նրա վրայ ազդեց այն մի ոսկին, որ
ես գրան վանդակի միջով նրա ձեռքը անց-
կացրի:—Տեսնում եմ որ աղնիւ երիտասարդ
էք, ասաց նա, և չէք ուղենալ անբախտացնել
ալեոր զօրականիս: Եթէ անպատճառ կամե-
նում էք ներս մտնել, դէհ համեցէք, տան
շուրջը ման կ'ածեմ ձեզ, որ ձեր հետաքրքրու-
թիւնը լադեցնէք: Պանաւանդ այս ըոպէիս հեշտ
է ինձ այդ անելը, քանի որ օրիորդն եր-
գեցողութեան դաս ունի, ուրեմն չի էլ իմա-
նալ, որ ես մի օտար մարդ եմ ներս բերել:

Ֆերունին մի ծանր բանալիքով բաց ա-
րաւ վանդակաւոր դուռն և ներս մտցրեց ինձ:
Գետնայալրկում գտնվում էր մի ընդարձակ
սրահ, որի պատուհանները վարագուրուած էին
արևելց: Հաւատարիմ մնալով գերիս՝ ես խնդրե-
ցի բանալ մի պատուհան, որպէս զի հնար լի-
նէր պատկերներն աշքէ անցնել: Դրանք հա-
սարակ տոհմային պատկերներ էին. միայն մի-
նը, որ կրակարանի վրայ էր կախուած, ուշա-
դրութիւնս զբաւեց: —Դա մեր օրիորդին մօր
կենդանագիրն է, ասաց ալեսորը, այսինքն հա-
րագատ մօր, որ արդէն տասնեւ հինգ տարի է
ի վեր մեռած է: Նա շատ սիրած բռնընքը և



նրան անուանում էին գեղեցիկ սըբուհի. դուստրը նրան շատ նման է, միայն թէ աւելի կայտառ է և վանդակի թռչնի պէս անդադար ոստոստում է:

—Կարծեմ թռչնի էլ կոկորդ ունի, մէջ բերի ես կեղծ անտարբերութեամբ: Այդ նա չէ, որ երդում է վերեւում:

—Այս, նա է, պատասխանեց ծերունին: Մեր թատրոնի երաժշտապետը շաբաթն երկու անգամ գալիս է նրան դաս տալու. և երբ հայրը նրան այցելութիւն է անում, երկար ժամերով մնում է այստեղ. օրիորդն երգեր է երգում նրա առջև, և իմ խեղճ տէրն այն ժամանակ ասես թէ զբախտի մէջ է զգում իրեն: Ուրիշ ուրախութիւն նա չունի, և եթէ՝ այս զաւակը չլինէր, նա չ'ը էլ ապրիլ աշխարհիս երեսին:

—Ի՞նչն է պակաս, հարցը ես. հիւանդ է, ինչ է:

—Ի՞նչպէս կամենաք, սիրելի պարոն, ասաց ալեսը, իւր ուսերը շաբժելով: Ով որ ճանաչում էր նրան, երբ նա դեռ զօրքի մէջ էր— Հրապարակում կանգնած ֆիօվանի հոկայական արձանն անդամ չունի աւելի ասպետական ու վիշտ տեսիլ, քան թէ այն, որ ունէր իմ զօրավարը: Իսկ այժմ—թշուառ երևոյթ: Ամբողջ օրը նըս-

տած է թիկնաթուում, թղթից նկարներ կբարեկամ և կամ գ օմին օ խաղալով,—և երբ կինը բան է տառում, տէրս նայում է նրան երեսին ահ ու զտղով և միշտ այոյի նշան է տալիս: Իւր վաղեմի քաջութիւնը նա միայն այն ժամանակ է երեցնում, երբ որ բանը հասնում է օրիորդին. այդ գիտուածում ով որ ուգենայ խաբել նրան, իսկոյն կրտեսնէ, որ հին առիւծը դեռ թաթեր ունի, թէ և ճիրանները խլուած են:

—Վակայն ինչպէս է ընկել այդ վիճակի մէջ:

—Ով կարող է իմանալ, պարոն: Այս տան մէջ պատահած բանների մասին՝ բացի զաղմնի շշաւկից՝ ուրիշ ովնչ լայտնի չէ: Ինձ թւում է թէ զօրափարի նոր ամուսնուց մի ուժին վերք հասած կըլինի տիրոջս սրտին, որից նա չէ կարողանում բժշկուիլ: Այժմ նա սովի ու ծարսելի տոկացող մի հինորեայ զինուորի պէս համբերութեամբ կրում է խոր կամքով շալակած բեռը, թէև մի ուրուական ստուերի նման ճնշուէր մաշուէր այդ բեռի անտանելի ծանրութեան տակ: Այս, այս, ինչ պատմութիւններ:

Մինչ այս մինչ այն՝ մենք բարձրացանք աստիճանների վրայ և աւելի մօտեցանք եր-

զին: Ականջիս հասնող ձայնը մի անամոք կոշտութիւն ունէր և մի պատանեկան, զրեթէ մանկական ոօպրանօ էր. և երգիչն կարծես թէ նրա համար էր միայն երգում, որ մի գաղտնիք ունէր սրտի մէջ, առանց ընաւ հոդտանելու, որ իւր ձայնն անորչ հնչէր:

— Ի՞նչպէս է կոչվում սինփօրինան (օրիորդը), հարցը ես, երբ որ մենք վերև հասանք:

— Բէտթրիչէ: Տանը Բիչէթթա ենք անուանում նրան: Ոհ լինչ ոսկի սիրտ ունի նա: Նինաս միշտ ասում է. չալրիկ, եթէ նա սպասելու լինի, մինչեւ որ իւր համար մի արժանաւոր փեռայ ճարուի, յաւխտեան կոյս կըմնայ: — Տեսէք, պարոն, ահա նրա փոքրիկ սենեակը: Ահա նրա զրքերը: Նինաս ասում է թէ օրիորդը շատ անգամ մինչեւ կէս զիշեր կարգում է, և կարգում է ամեն լեզուներով: Սա ել փոքրիկ ննջարանն է, ուր նրանք երկուող միասին են քնում: Անկողնի վրայ կախուած պատկերը իմ խեղճ տիրոջ պատկերն է իւր զօրավարական միազգեստով, որ հազնում էր մեզ պատերազմ տանելիս: Այն՝ ետեւում նկարուած հրացան ճանող փոքրիկ մարդը, իբր թէ ես եմ, օրիորդիս ասելով: Ընչացքները նա ինքնն է աւելացըել նմանութիւնն աւելի ակներև անելու

համար: Բայց դուրս գնանք. Ել տեսնելու բան չկայ այստեղ: Տեսէք, կարասիները հին են. մի օր զօրավարը կամեցել էր նորերը բերել տալ, բայց օրիորդը մերժեց, որովհետեւ նա ոչ մի բան չէ ուղղում փոխել այս սենեակում, ուր ըոլոր սարքը նոյն զբութեան մէջ է, ինչպէս որ էր հանգուցեալ տիրուհուս օրով, եղբ նա գեռ ջահիկ կին էր: Ահա նա այս պատշգամբի վրայ էր նստում երեկոյեան զովին, իւր զաւակի օրօրոցն օրօրելով և մարդու վերադարձին սպասելով.

Ես դուրս ելալ պատշգամբի վրայ և շոյեցի շանը, որ սկսաւ ալոզը խաղցնելով ձեռքս լիզել: Ալեոր մարդու ամեն մի խօսքը ասես թէ մի մի կաթիլ իւղ լինէր՝ սրտիս կրակի վրայ լցուած: Հապա այն երգը, որ հնչում էր մօտկից... նա և՛ աւելի բորբոքում էր իմ մէջ վառուած հրդեհը:

Յուզունքս չմասնելու համար ես սկսալ դանազան բաներ խօսել պարտէզի անկեալ վիճակի, պատուհանի մօտ կանգնած մօզակի սեղանի և վերջապէս առաստաղի վրայ երեցող նկարի մասին: Թէև առաջնորդիս համբերութիւնն ակներև նուազում էր, ես չէի կարողանում տանից գուրս գալ: Յանկարծ երգեցողութիւնը հատաւ, զրեթէ նոյն ըոպէին կողքի

դուռը մի անդամից բացուեցաւ, և շեմքի վրայ կանդ առաւ Բէաթրիչէն՝ նօտելլը ձեռին:

Ես դեռ չեմ տեսել նրան այդպէս մօտկից. բայց դարձեալ չկարողացայ լաւ դիտե նրա դէմքը, որովհետև աչքերս մուժ կոխեց: Միայն թէ առաջին խոկ հայեացքից նշամարեցի, որ մէդալիօնո նրա վզին էր:

Ֆերունին այժմ մի քանի բայլ լետ գնաց ներողութիւն կակաղելով օրիորդի առջե, և կամաց քաշեց իմ փէշից:

— Ոչինչ, ոչինչ, Փարիօ, ասաց օրիորդը: Ման ածլիք պարոնին, եթէ նա կամենում է տեսնել մեր տունն ու պարտէզը: Դու էլ, նինա, հետերը գնա, աւելցրեց նա, ընկերուհուն դառնալով, որ ձեռքում մի կտր բռնած նստել էր դաշնամուրի մօտ, և լսիր, թէ ինչ եմ ուզում ասել քեզ:

Այս ասելիս նա մի բան շշնչեց ընկերուհու ականջին, մինչ դեռ աչքերն իմ վրայ էին սկսուած, և լետով մի այնպիսի ոքանչելի շնորհով դէպի ինձ թեքեց իւր զլուխը, որ ես հիացումից ոչ մի բառ արտասանել չկարողացայ: Մի և նոյն ժամանակ նա իւր ձեռքն ասես թէ չիմանալով մէդալիօնի վրայ դրաւ և վերջապէս մօտեցաւ վարժապետին, որ լուռ դիտում էր այդ բոլորը:

Երգեցողութեան գանգը նորից սկսուեցաւ, մինչ դեռ մենք երեքս դուրս էինք զալիս սենեակից: Աստիճաններից վայր իջնելիս նինան ամեն մի շրջանի վրայ տուր աչքով զննում էր ինձ, ոտակայն բան չկը ասում: Նա կտրեց իւր լուռթիւնը, երբ որ մենք պարտէզ մտանք, և ասաց դէպի հայրը դառնալով:

— Քիչէթան ապապրեց ինձ երկու նայինց տալ պարոնին, որ երկար ման գալուց գուցէ արդէն ծարաւած լինի. ուրեմն շատրուանի մօտով անցնենք.— Կաստուններն այնտեղ են:

Ես երրև երազի մէջ հետուեցի երկուսին, երբեմն լետ նայելով դէպի դուռը, որտեղից վերստին երդ էր հնչում: Նինան էլ մի անգամ վերև նայեց և լետոյ իմ վրայ: Ես բնաւ չէի ուզում բան թաքցնել նրանկց. ընդհակառակն—հոգւով չափ պատրաստ էի մերկացնել նրան իմ սիրաթը: Բայց որովհետև հայրը ներկայ էր, պէտք եղաւ լուել: Միայն երբ որ հասանք դրան վանդակին և նինան նարինջներ տուաւ ինձ, ես կարողացայ շշնչել նրա ականջին,— Ողջունիր նրան և ասա, որ նա ինձնից լուր կըտանալի, և տար նրան այս պտուղը, և երբ որ նա ճաշակելու լինի... Այստեղ հայրը մօտեցաւ և աղձակեց ինձ մեղմիւ, լինչպէս և ներս էր թողել: Ես կրկնեցի նրան իմ լուռթեան

խոստումը, սակայն երևում էր, որ նա մի ու-
րիշ տեսակ կասկած ունէր իմ մասին, և նրա
ազնիւ դէմքը միգապատ էր:

Ես անց կացրի զիշերը Բէաթրիչէին մի
երկար նամակ գրելով, որ նկարագրում էի հո-
դուս վիճակը, և իմ կեանքն ու մահը նրա
ձեռքն էի դնում: Երբ որ այս անմիտ զա-
ռանցանքի մէջ շարած տողերս անշափ յան-
դուգն էին թւում ինձ, ես վերցնում էի սեղա-
նի վրայ դրուած նարինջը, ճնշում էի շրթուն-
քիս, և աչքերս փակելով, երեւակայում էի հո-
գուս առջև այն բոպէն, երբ նա ինձ շեմքում
կանգնած ողջոյն տուաւ իւր երկնալին հա-
յեացքով և ուկեծոյլ սրտի վրայ դրաւ իւր աջը:

Այնուհետեւ ես հանգիստ սրտով քննեցի, —
քննեցի մինչև արևել բարձրանալը, և կէսօրից
յետով, ինքս թղթատարի պաշտօն կատարելով,
ճանապարհ ընկայ դէպի ամարանոցը: Բախտը
ժպտում էր ինձ: Գերուկի սիրտը որսալու հա-
մար ես պատրաստել էի մի երկար և ազդու-
նառ. սակայն հնչակից քաշեցի թէ չէ, նրա
փոխարէն նինան ելաւ իմ առջև. ուրեմն ճա-
ռըն աւելորդ էր: Խելօք աղջիկը վերստին ինձ
տեսնելիս ոչ մի զարմանք չլայտնեց և նամակս
առանց շփոթուելու ընդունեց: Բայց երբ որ
հարցրի, թէ արդեօք կարող եմ պատասխան

ստանալ օբխորդից, նա մի խորամանկ կերպա-
բանք շինեց և ասաց: — Ո՞վ զիտէ: — Այսու ա-
մենայնիւ ես կըցանկայի վաղը նորից այստեղ
դալ, ասացի ես, և ճիշդ այս միջոցին, և կը-
լինդրեմ, որ սպասես ինձ վանդակի մօտ: Ես
չէի ուզել քաշել հնչակից, և լաւ կըլինէր, որ
հայրդ մասնակից չլինէր իմ դադտնիքին:

— Հայրս, ասաց նա, և ծիծաղեց: Մենք
չենք վախենում նրանից. նա միշտ մարդակեր է
ձեանում, բայց հերիք է որ Բիչէթթան մի
նշան տայ, և նա ջնորը կ'ընկնի մեզ համար:
Սակայն վաղը մէկ ժամով ուշ եկէք. մենք
նկարչութեան դաս ունինք և չենք կարող ձեր
պատճառով յետ զրկել վարժապիտին: Կըցանկալք:

Փողոցից մի կառք էր մօտենում. ես կա-
րողացայ միայն այն կանչել փոքրիկ աղջկան.
Նա արդէն փախել էր: Կոյն բոպէին ես էլ
փախայ, որ ոչ ոք չտեսնէ ինձ դրան մօտ:
Կառքը դադարեցաւ իսկ և իսկ դրան առջև,
և ալեւոր Փաբիօն կառավարի նստարանից վայր
ցատկելով, օղնեց իշնելու կառքի միջից մի
բարձրահասակ, սպիտակահեր ծեր մարդու, որի
աչքերը, ճակատն ու քիթը գուշակել էին տա-
լիս, թէ նա Բէաթրիչէի հայրն էր: Նրա մէջ-
քը փոքր ինչ կոր էր, ոտքերը երերուն. սա-
կայն քայլելիս ձեռքերը ժիր ժիր իրար էր

շիռում և ի որտէ ժպտում էր խնդութիւնից: Կառքի մէջ գլուած էր ծաղկիներով ու թշտապատ երերով լիքը մի զամբիւղ. սպասաւորներից մինը վերցրեց այդ զամբիւղն և տարաւ ծերունու ետևից: Ես այնպէս հուպ էի սեղմուած պարսպին, որ ոչ ոք ինձ ընշմարեց, թէւ ինքս ամեն բան տեսնում էի: Դեռ ոչ ոք չէր քաշել հնչակից. բայց վանդակաւոր գուռը յանկարծ բացուեցաւ, և դստեր սպիտակ ու ճապուկ իրանը ծերունի հօր վզովն ընկաւ, և հայրը մի սրտաշարժ արագութեամբ նրան գըրկելով, գրեթէ վերցրեց ու ներս տարաւ: Մինչդեռ ես նախանձաբեկ նայում էի նրանց ետևից, ամենքն անհետացան, և դուռը փակուեցաւ իմ առջև:

Թէ ինչպէս անցկացը ես այն օրուայ մնացորդը ու գիշերուայ ժամերը—ինքս էլ չզիտեմ: Ասես թէ մի ազօտ լրս էր փալլում իմ շուրջը. ես զգում էի մի քաղցր թմբրութիւն, աչքերս փակում էին անուշ նիրհով և մի բան, սրնգի ու ջութակի պէս հնաելով, անդադար երգում էր սրտիս մէջ: Ես, որ միշտ երկշոտ էի աղջիկների ու տիմինանց առջև, — թէպէտ և սիրուն երիտասարդ համարուիս լաւ զիտէի, — այժը համարձակ նայում էի ճակատազրիս վրայ և վոտահ էի, որ օրիսրդի սիրտը ինձ էր պատ-

կանում: Միայն չզիտէի, թէ ինչպէս համբերեմ մինչև այն ժամը, եղր որ նրա շրթունքից պիտի լսէի այդ բանը:

Պէտք եմ համարում աւելցնել այստեղ, օր յաջորդ օրը ես մի տարօրինակ հանդիպումն ունեցաւ եկեղեցում: Այդ օրն ես ոչ պատկերներ տեսնելու փափաղ ունէի, ոչ սիւներ, ոչ էլ մարդիկ. այլ գուրս էի զնացել առանց որ և է նպատակի, — միայն անհամբերութեանս տեղը փոխելու համար: Մտքերս այնպէս ցրուած էին, որ եկեղեցի մտնելիս՝ մինչև անդամ մոռացայ մեղմել քայլերս, չնայելով որ պատարագ կար: Ես ուշադիր եղաւ իմ անվայել վարմունքին միայն մի պատաւ կնոջ տրտունջից, և այնուհետև հէնց առաջին սիւնի մօտ կանգ տռնելով, սկսայ ականջ զնել երգիսնի մըմունջին, զանդակի հնչումին և հանգիստ ներշնչել խունկի բուրմունքը: Մինչ դեռ այսպէս մտամոլոր նայում էի ծնկաչոք ժողովրդի վրայ— ինքս իրեւ մի խստակրօն կալվինական զանց արի հարկաւ հետեւելու այդ բարեպաշտ կանոնին,— յանկարծ կողմնակի նստարաններից մէկի վրայ մի զորդ կապուտ աչքեր նշմարեցի դէմ առ դէմ, որոնք շիկակուն մազերով ծածկուած սպիտակ ճակատի տակից անշարժ լարուած էին իմ վրայ և այդպէս մինչև պատարազի վերջը վրաս շեշ-

տուած մնացին: Խսոստովանում եմ, որ մի ուլիշ ժամանակ այդ լրիկ հարցմունքը անշուշտ մի պատասխան կ'օրսար ինձնից. սակայն այն առաւօտ ես մնացի բոլորովին անտարբեր և սիրով կըթողնէի եկեղեցին, եթէ չվախենալի նորից շփոթ հանել քաղերովս:—Երբ որ ամենքը բարձրացան, ես տեսալ որ սիրուն կիւնը շուտ շուտ վերկացաւ նստարանից, մի սպիտակ քօղ ձգեց զլխին և շիտակ դէպի ինձ զիմեց անցքի միջով: Նրա կազմուածքն անթեր էր, և թէպէտ նա վորքը ինչ գէր էր, բայց այնպէս էլ արագաշարժ, որ գեռ նորատի էր երեւում: Իւր սպիտակ ատօք ձեռքում, որով ամփոփել էր քօղի ծալրերը, նա ունէր բռնած մի մարդարտապատ կոլթով հովհար: Նա բաց արաւ այդ հովհարն և նրան անհոգ շարժելով դէպի ինձ մօտենալիս՝ մի հանգիստ ու բազմիմաստ հայեացք նետեց իմ վրայ: Ես ձեւացայ, իբր թէ ոչ մի բան չեմ հասկանում: Այս սպատճառով տիկինն իւր զլուխը յետ թոթուեց, սիզալով ժպտաց—այդ միջոցին նրա շըրթունքում երկու շար սիրուն ատամներ վաղեցան և նա խշխալով շուտ շուտ անցաւ իմ կողքից:

Ես արդէն յաջորդ բոպէին մոռացայ այդ վորքիկ դէպքը: Սակայն զուարթութիւնս վախել էր, և որքան մօտենում էր երեկոն, այն-

քան էլ վրդովմունքս սաստկանում էր: Վերջապէս երբ որ ժամը վրայ հասաւ, ես յամը յամը քաղերով ճանապարհ ընկայ դէպի ամարանոցը, որպէս մի յանցաւոր, որ գնում է դատաւորի առջև կանգնելու:

Մեծ եղաւ զարհուրանքս, երբ ես Նինալին հանդիպելու վոտսարէն, նրա հօրը պատահեցալ գրան առջև: Սակայն ծերուկը, թէ և իւր դէմքը բաւականին ամպոտ էր, արգէն հեռուից ողջոյն տուաւ ինձ սիրով և նշան արաւ որ մօտենամ:

— Դուք մի նամակ էք գրել սինխօրինալին, ասաց նա զլուխը շարժելով: Ա՛յ, ալ, այդ ինչ է ձեր արածը: Եթէ ես մի այդպիսի բան սպասած լինէի, թող չէի տալ, որ դուք մեր շեմքը վրայ ստք դնէիք: Խոկ իմ խնդո՞մ տէրը. ինչե՞ր եմ խստացել նրան և ո՞լ զիտէ, թէ գեռ ինչե՞ր կըպատահին—այս մասին մտածել անգամ գժուար է ինձ:

— Քաջ ծերունի բարեկամ, ասացի ես, ոչ մի բան չի պատահիլ ձեղնից թաքուն: Եթէ դուք երէկ տանը լինէիք, ես անշուշտ ձեզ կըտափի նամակը, և դուք ինքներդ կարող կըլինէիք կարգալ նրան ու տեսնել, որ իմ դիտաւորութիւնը բոլորովին աղնիւ է: Բայց ասացէք, ի սէր Սոտուծոյ...

—Եկէք, ընդմիջեց նա, —ժամակորոյս լինել պէտք չէ: Գուշը մի ագնիւ երիտասարդէք. այս էլ կայ, որ ես՝ հէք ծերունիս, միթէ կարող էի արգելք լինել այս բանին, որքան էլ կամենալի: Տանտիկինը նա է, հաւատացէք ինձ. որքան էլ մանուկ լինի—նաև է տանտիկինը, և երբ նա տոէ— Ես կամենում եմ այս ինչ բանը—ոչ ոք չի կարողանալ դէմ կենալ նրան: Եւ նա կամենում է այս ըսպէիս տեսնել ձեզ, այս ըսպէիս խօսել ձեզ հետ:

Այդ խօսքերից զլուխս բոլորովին պտոյս եկաւ: Ես միայն մի նամակի յուս ունէի, և յանկարծ այդպիսի բան:

Դերունին ինքն էլ յուզուած էր, երբ ես սաստիկ նրա ձեռքը սեղմեցի: Նա տարաւ ինձ դէպի տուն և անցեալ օրուայ պէս՝ կողմնակի դռնով մտցրեց ստորին յարկի մեծ որաշը: Այս անգամ բոլոր պատահաններն ու վարտորները բաց էին, սրապէս զի երեկոյան կարմիր լոյսը ներս մտնէր. կրակարանի հանգէսլ կանգնած էին երկու աթոռ, և երբ մենք ներս մտանք, մէկի վրայից բարձրացաւ օրիորդի սիրուն իրանն ու մի քանի քայլ արաւ դէպի ինձ: Նա մի դիրք ունէր իւր ձախ ձեռում, և ես նշանաբեցի, որ նամակս այդ դրքի մէջ էր դրուած: Նրա շքեղ մազերը կապուած էին

դլսի վրայ և հիւսուած մի սև թաւշեալ ժապաւէնով: Կրծքին դարձեալ երկում էր մէտալիօնս:

— Փարփիօ, ասաց նա, բաց արա պարտէզի դուռը և սպասիր պատշպամը վրայ. դուցէ պէտք լինիս:

Դերունին սպատիկառանքով զլուխս տուաւ և օրիորդի ասածը կատարեց: Ալդ միջոցին մենք երկուսս դէմ ու դէմ կանգնած մնացինք, և ես սրտիս թնդիւնից չէի կարողանում արտասանել և ոչ մի բառ:

Նրա հայեացքը կիսով չափ հետաքննին, կլսով չափ շուարած, անդրդուելի հաստատութեամբ հանգչում էր աչքերիս վրայ: Վերջապէս նա ժողովեց իւր ոյժն և ասես թէ պարզ ըմբռնեց, ինչ որ մինչև այժմ գեռ դադտնիք էր իւր համար: Նա պարզեց աջը դէպի ինձ: Ես արագ բռնեցի նրան, այլ սիրտ չարի սեղմելու շրմունքիս:

— Եկ, ասաց նա, և նստիր. ես շատ բան ունիմ քեզ ասելու: Տեսնում ես այս պատկերը. լիմ տենչալի մալրիկն է, որ վազուց մեռած է: Նամակդ որ ստացայ, այստեղ նստայ ու հարցըի նրան, թէ. ինչ պատաքսան ուզարկեմ քեզ: Ինձ թուեցաւ, որ նա միայն ճշմորտութիւնն կուղնար լսել ինձանից. իսկ ճշմարտութիւնն

ալս է, որ այն ըոպէից, երբ ես քեզ առաջին անգամ կառւքում տեսայ, ուրիշ բանի վրայ չեմ մտածել, բայց միայն քո վրայ, և մինչև մահս էլ մտածելու եմ:

Նա վեր կացաւ, ես էլ վեր թռայ: Երջանկութիւնից հարբած՝ ես կամենում էի հուպ տալ նրան իմ կրծքին, բայց նա հեզիկ յետ քաշուելով ասաց. — Աչ, Ամադէօ, պէտք չէ: Գու զիտես ալժմ, որ ես քոնն եմ և — ուրիշ մարդու պատկանելու չեմ. Հանգստանանք: Անցեալ զիշեր ես ամեն բան լսու կշռեցի: Այսուհետեւ էլ չգաս այստեղ. խօսք եմ տուել Փաքիօին, որ այս առաջին և վերջին անգամըն եմ տեսնում քեզ մեր տանը: Պատճառ՝ եթէ ստէպ գալու լինիս, ես բոլորովին կամքեի կերի կրտառնամ, այն ինչ ես չէի ուզիլ ամօթ բերել իմ հօրը: Լսիր, պէտք է որ գու նրա մօտ դնաս. նրա տան մէջ մուտք գտնելը քեզ դժուար չի լինիլ. չէ որ, աւելացրեց նա հառաջելով, այնքան երիտասարդ մարդիկ և այնքան օտարներ են յաճախում նրա տունը: Երբ որ նա քեզ բաւականին ճանաչէ և հետդ լաւ մտերմանայ, այնուհետեւ ուզիր ինձ, մինչեւ անգամ յալոնիք էլ, թէ մենք արգէն իրար ծանօթ ենք և թէ քեզնից զատ՝ ես ուրիշ մարդ չեմ կամենում ինձ համար: Մնա-

ցեալն ինձ թող և խօսք տուր ոչինչ չյայտնել նրա ամուսնին: Եթէ ոչ դժբախտութիւն կրծագի. որովհետեւ նա չէ սիրում ինձ և տանել անգամ չէ կարող, որ ես երջանիկ լինէի: Այս, Ամադէօ, կարելի՞ է արդեօք, որ գու էլ ինձ այնպէս սիրէիր, ինչպէս որ ես եմ քեզ սիրում: Այն առաջին օրը արգեօք քեզ էլ այնպէս չժուեց, որ իրը թէ կողքիդ շանթորուաց, երկիրը գողաց և ծառերն ու թուփերը շուրջանակի հրով վառուեցան: Զգիտեմ, այն ինչ չարութիւն էր, որ դրգեց ինձ ոստ նետել ամպհովանու տակ նիրհած օտարական մարդու վրայ: Ես երեսդ անգամ չէի տեսել, և իմ արածը, մի երեխայութիւն էր, որի վրայ զրեթէ իսկոյն զղջացի: Սակայն նոյն ըոպէին մի անգիմադրելի զօրութիւն սաստիկ քաշեց ինձ դէպի քեզ. ես ստիպուեցայ այլ ևս մի անգամ պատի վրայից նայելու, և ահա գու էիր կանգնած կառքի մէջ և ողջունում ինձ նունենու ոստով. նոյն ըոպէին մարմնիս տիրեց կրակ ու սարսուռ, և այնուհետեւ ինչ էլ անեմ, ուր էլ գնամ — դու ես կանգնած իմ առջւե:

Ես վերստին աթոռի մօտ տարայ նրան և շարունակ աջից բռնած պատմեցի, թէ ինչպէս էի անցկացրել այն օրը: Նա չէր նայում իմ վրայ, այնպէս որ ես միայն նրա զրաւիչ ու

քնքուշ կիսադէմքն ունէի աչքիս առջև. ամենալն ինչ ազգու էր այդ դէմքի վրայ, աղդու էին և՛ շնորհալոյս գունատութիւնն և՛ երկար թերթերունքի ներքևն եղած փափուկ ու գորշ ստուերները: Յետոյ ես էլ լռեցի և նրա փոքրիկ աջը բռնած, զգում էի արիւնի թունդ հոսումը նրա նուրբ երակներում: Դերունի ֆարիօն մի անգամ յուշիկ ներս նայեց հարցնելու, թէ արդեօք միրդ բերէ թէ ոչ:

— Յետոյ, ասաց Բէաթրիչէն: Բայց գուցէ դու ծարաւի ես:

— Քո շրժունքին, մրմնջեցի ես:

Նա կրկին թոթուեց գլուխը, և յօնքերը կիտեց:

Դու ինձ չես սիրում, ասացի ես:

— Չափից դուրս, պատախանեց նա ախքաշելով. յետոյ վեր կացաւ աթոռից: Այժմ պարտէզ գնանք, քանի որ արեւը մայր չէ մտել. ես քեզ նարինջ կըքաղեմ: Այս անգամ էլ պէտք չէ նինալին յանձնել այդ գործը:

Այսպէս մենք դուրս ելանք: Նա ամուր բռնած էր իմ ձեռքից և զանազան բաներ էր հարցնում հայրենիքիս ու ծնողներիս մասին և թէ մէդալիօնի մազերն արդեօք յատուկ իմս էին: Երբ ասացի, թէ քոյրս էր տուել, խնդրեց որ նրա վրայ էլ բան պատմեմ:

— Ես կամենում եմ տեսնել նրան, ասաց նա. նա ինձ անշուշտ սիրելու է, որովհետեւ ես այժմէն իսկ սիրում եմ նրան: Բայց մենք երկար չենք մնալ նրա մօտ. եթէ ոչ՝ հայրս չի դիմանալ առանց ինձ և կըմեռնի: Ես եմ նրա միակ ընկերը: Այսուհետեւ դու կըկին ինձ հետ Բօլոնիա կըվերադառնաս, չէ:

Խոստացայ, ինչ որ միայն ցանկանում էր: Եւ ինչ բան կարող էր անհնարին երևնալ ինձ այն վայրկենից սկսած, որ մի այդպիսի հրաշք էր կատարուել և այդ հրեշտակացին էակը վրաս էր նայուն իւր սիրալիր աչքերով: — Նա քանի գնում զուարթանում էր. վերջապէս մենք սկըսանք երեխաների պէս ծիծաղել և իրար դէմ նարինջներ նետել, որ նա քաղել էր ապակետան մօտ կանգնած ծառերից:

— Եկ գնտակ խաղանք, ասաց նա. թող նիւնան էլ մեղ հետ լինի, թէկ նա կարող է նախանձ շարժել, որովհետեւ միշտ քո մասին է միայն խօսում: Տես ինչպէս է թաքչում ծառերի ետեւ, կարծելով թէ մեղ արգելք կըլինի: Սակայն ինչ ունինք մենք իրար ասելու, որ չամէինք նաև ամբողջ աշխարհի առջև:

Նա կանչեց իւր ընկերուհուն, և բարի աղջիկը բորբոքուած դէմքով մեղ մօտենալիս տուաւ ինձ իւր աջն և ասաց. — Քաղցր է ինձ

Հաւատալ, որ դուք ձեր բախտին արժանի էք: Բացի ձեզնից ես ոչ ոքի հետ չէի կամենալ տեսնել Բիշէթթալին. սակայն վայ ձեղ, պարոն Ամադէօ, եթէ երջանիկ չանէք նրան:

Այդ ստստի հետ նա մի այնպիսի շարժմունք արաւ, որ մեր երկուսին ծիծաղը բռնեց, և նա ինքն էլ ստիպուեցաւ մեզ հետ խնդալ: Յետոյ այն խոկ մարզի վրայ, ուր ես գարանել էի առաջին անդամ աղջիկներին տեսնելիս, մենք սկսանք երեքս միասին մեր գնդակը վեր վայր նետել և շուտով այն աստիճան յափշտակուեցանք այդ խաղով, որ առես թէ էլ բնաւորիշ դորձ չունենալինք անելու:

Փարիս հարիկը չերևեց: Երեկոյեան ստուերներն արդէն իջնում էին, երբ աղջիկներն ինձ դէպի ալուր դուռն առաջնորդեցին: Ես դուրս մղուեցայ՝ առանց մի համբոր անդամ ստանալու տենչալի բերնից և հազիւ միայն կարողացայ երկաթորմի ետևից բռնել նրա աջը, որի վրայ շրթունքս մի բոպէ հանդչեցան:

Ոհ ինչ երեկոյ և ինչ զիշեր: Պանդոկիս հիւրերը կարող էին կարծել, թէ ես խելագար էի և կամ թէ մի անդինացի, որ նրանց աչքում դրեթէ նոյն էր: Ես տուն վերագարձայ մի ահազին ծաղկալի զամբիւլով, որ բերում էր իմ ետևից փունջ վաճառող մի աղջիկ. այդ

ծաղիկները ես սկսեցի սենեակիս մէջ, մի շիշ զինի ապսպլեցի և մի սոկի շպրտեցի զըսում ածող սաղանդարին: Այնուհետև հանգիստ սըրտով քուն եղալ զիշերուայ զովին և լաւ միաքըս է, որ կարծես թէ զգում լինէի սրտիս իւրաքանչիւր բաբախման մէջ երկրագնդի երերումն ու տատանումը, մինչ նա թռչում էր աստեղազարդ երկնքի միջով:

Միայն առաւտեան միտքս ընկաւ, որ դեռ շատ արգելքնեզ կալին իմ առջև, մինչեւ որ կարողանացի ձեռք բերել այն, ինչ որ ինձ էր պատկանում: Ինչպէս սկստի ներս մտնէի հօր տունը, և ալիքեօք նա էլ աղջկայ պէս խկոյն հաւատ կընծայէր ինձ: Մինչդեռ զրունում էի կամարների ներքեւ այս բաների վրայ մտածելով, դարձեալ իմ բախտը բանեց: Ես հանգիպեցայ մեր առևտրական ընկերին, որին զարուս երկրորդ օրը տեսել էի. նա շատ զարմացաւ որ ես դեռ այնտեղ եմ: Ինձ արդարացնելու համար ես պատճառեցի, թէ փեսալիցս նամակներ ունէի ստանալու, թէ մինք միտք ունինք մի առևտրական ընկերութիւն հիմնելու իտալիայում, թէ մեր աչքը նախ և առաջ Յօլնիալի վրայ է ուղղուած, թէ ուրեմն իմ մնալը կարող է դեռ երկար տեսիլ և թէ ինձ պէտք է բարեկամներ ճարել

քաղաքում: Այդ միջոցին մի քանի նշանաւոր անձանց անուան կետ զօրավարի անունն էլ լիշտակեցի: Մեր զործակիցը չէր ճանաչում նրան անձամբ. սակայն ասաց, թէ իւր ազգականներից մի երիտասարդ հոգևորական ստէպ գնում է զօրավարի մօտ և սիրով էլ կըլօժարի մտցնել ինձ նրա տունը: Միայն թէ ինձ պէտք է զգոյշ կենալ ջահիլ տիկնոջ վտանգաւոր աչքերից, վասն զի նա թէև չունի մի անողոք կնոջ համբաւ, այսու ամենանիւր իմ ընկնիլը նրա ետեից զուր կըլինի, քանի որ մի երիտասարդ կօմս արդէն նրա յայտնի սիրահարն է, և կոմսը հաղիւ թէ ուղենայ այնպէս շուտով տեղի տալ մի նորեկ տարփաւորի:

Այդ ձեռվ խօսեցի ես, ինչքան որ կարողացի, և մենք վճռեցինք, թէ ինչ պիտի անէի: Արդէն նոյն երեկոյին ես հանդիպեցայ սրճարանում երիտասարդ հոգևորականին և մենք գնացինք զօրավարի տունը, որ դրսից անշուք, իսկ ներսից շռայլորէն զարդարուած մի պալատ էր՝ լուիկ փողոցում կանգնած: Փափուկ զորդերի վրայից սահելով մտանք այն սրահը, ուր ամեն երեկոյ ընդունվում էրմ ընտանի հիւրեր—զանազան կրօնաւոր առաջնորդներ, զօրականներ և մի քանի տոհմիկներ—բոլորն էլ ալր մարդիկ: Իմ նորատի արբան չէր

կշտանում կըկնելով, թէ ինչ մեծ երջանկութիւն է այն տան մէջ մուտք ունենալը:—Ո՛հ ինչ կին, հառաջում էր նա: Նա յուսով էր, թէ մի օր կարդը նրան էլ կըհասնի:

Ներս մտայ թէ չէ, իմ առաջին հայեացքըն ընկաւ ալեոր զօրավարի վրայ, որ նստած էր թիկնաթոռում մի ծեր կանոնիկոսի դէմ յանդիման, փոքրիկ մարմարեալ սեղանի առջև, որի վրայ, դօմինօֆ քարեր էին շառաջում: Նրա կշտին մի աթոռակի վրայ դրուած էին զինուորների պատկերներով զարդարուն թերթեր և մի մկրատ, որով նա կտրում էր պատկերները, երբ որ ոչ ոք չէր գալիս գօմինօ խաղալու նրա հետ: Մի ջահ վերևից լոյս էր սփռում նրա գլխի վրայ. այդ լուսի պայծառ շաղումից ես վերստին նշմարեցի նրա նմանութիւնը Բէաթրիչէիս հետ և զարմացայ: Իմ առաջնորդը չժողուած ինձ երկար մնալու նրա մօտ: Առաջին իսկ քաղաքավարական բառերիցս յետոյ, որ ծերունին ընդունեց բարեժալիտ հեղութեամբ աջս սեղմելով, ինձ պէտք եղաւ մտնել մի փոքրիկ սենեակ, ուր բազմոցի վրայ նստած էր տանտիկինը, իսկ նրա առջև ճօճուն աթոռում թեք էր ընկած մի երկար ու պճնի երիտասարդ՝ երկուսն էլ ասես թէ փոքր ինչ բեղրած ալդպէս դէմ ու դէմ նստելուց: Երիտա-

սարդ կ. թերթոտում էր իւր ծունկի վրայ մի ալբօմ. իսկ գեղեցիկ կինը հիւսում էր մի նկարէն բարձի երես. երբեմն էլ իւր փոքրիկ դիպակաւոր մուճակի ծայրով շիշփում էր մի ահազին անգորեան կատու, որ հանդիստ քնած էր գորզի վրայ, նրա ոտիկների տակ: Անթիւ հայելիների մէջ բեկբեկուղ մոմակալների մեղմ լուսում ես չլսրողացայ մի անգամից նշմարել, որ դիմացիս կինը առաւօտեան պատարագին լինձ հանդիպած գեղուհին էր, թէև մարգարտաշար հովհարը փոքրիկ սեղանի վրայ էր կենում նրա կողքին: Իսկ նա երեխ թէ իսկոյն ճանաչեց լինձ և այնպէս շուտ վեր թռաւ տեղից, որ նրա պերճ մագերի սանտրը վայր լնկաւ և զանդուրները բացուելով՝ որոր մոլոր ուսերի վրայ փռուեցան: Կատուն խրտնեց ու մռմռալով վրաս նայեց. բարձրահասակ պատանին մի սուր հայեացք նետեց իմ դէմ և ես լինքս, տիկնոջը ճանաչելով, այնպէս շուարած մնացի, որ եթէ ճարպիկ ուղեկիցս իւր լեզուանութեամբ չօգնէր լինձ, մի խօսք անգամ չէի գտնիլ առելու: Կինն էլ երկար ժամանակ ոչինչ չասաց, այլ նայում էր վրաս դարձեալ նոյն օտարօտի ակնարկով, որ արդէն եկեղեցում երկրայելի էր թուել լինձ: Նրա դէմքը կենդանացաւ միայն այն ըսպէին, երբ նա նկատեց, որ կոմսը իւր սառն անքա-

ղաքավարութեամբ աշխատում էր անտես անել ու բանի տեղ չդնել ինձ: Յետոյ նա դուրս քշեց կատուին և փաղաքշական ձայնով, որ դեռ բաւական թարմ էր, հրաւիրեց ինձ բազմոցի վրայ նստելու իւր կողքին:— Իսկ դուք, կոմս, այս միջոցին կարող էք զննել նօտերը, որ տակաւին նոր եմ ստացել Փլորէնցիալից. այնուհետև ես կ'երգեմ և դուք ինձ կըդաշնակցէք:

Պատանի կոմսը մտադիր էր փնթփնթալ, ոտակայն կապոյտ աչքերի հաստատ ակնարկը նոյն րոպէին զսպեց նրան: Ճուտով մերձաւոր դահլիճից լսեցինք, որ նա ակորդներ էր հընչեցնում դաշնամուրի վրայ: Նոյն միջոցին փոքրիկ աբբան սկսաւ նոր ֆրանսերէն ոօմաններ կտրել, և ես մենակ մնացի մեծարանք ընծայելու տիրուհուն: Գիտէ Աստուած, թէ որքան էի նախանձում ես այն երկուսին, — և մանաւանդ միւս սրահում գօմինօ խաղացող կանոնիկոսին: Կնոջ առաջին իսկ բառերից յետոյ ես մի թշնամական դրդիու զգացի նրա դէմ, որ նոյն չափ սաստկանում էր, որչափ որ նա աշխատում էր հաճելի երևնալ լինձ: Ամենամեծ ուշիմութիւն էր հարկաւոր լինձ՝ դէթ արտաքուստ քաղաքավար մնալու և իրօք նրա խօսքերին ականչ դնելու համար. որովհետև իմ

մտքերը թռչում էին դէպի այգու սրահը, և
այս կնոջ բոլոր ճարտար ու կոկ թոթովման մի-
ջով ես լսում էի սիրուհու քնքուշ մրմունցն ու
տեսնում նրա լուրջ աչքերը, որոնք վշտահար
պշնում էին իմ վրայ:

Սակայն իմ մտքերի ու հոգու բացակայու-
թեան չնայելով, գեղեցիկ կինը կարծես թէ
անբաւական չէր այս առաջին խօսակցութիւ-
նից: Տրտմութեանս պատճառը նա անշուշտ
ուրիշ կերպ էր հասկանում և յօգուտ իւր բա-
ցատրում այն հանգամանքը, որ ես աշխատել
էի մուտք գտնել նրա տան մէջ: Նա գովեց իմ
իտալերէնը, կցելով միայն, թէ խօսելու եղա-
նակը փոքր ինչ պիէմօնտեան բարբառի հըն-
չումն ունի, որից ես չէի կարող աւելի հեշտ
աղատուիլ, բայց եթէ ստէպ նրա մօտ յաճա-
խելով և ամեն աղատ երեկոյ նրա տանը հան-
դիպելով:

— Իմ պաշտօններս շատ տխուր են, —
հառաչեց նա, նայելով դէպի յարակից սե-
նեակը, որտեղից նոյն բոպէին լսկում էր ալոր
տանտէրի բարի ծիծաղը նոր տարած խաղի
առթիւ: Իմ կեանքն սկսվում է միայն այս
երեկոյեան ժամերին: Գուք հարկաւ դեռ երի-
տասարդ էք, և մի վշտահար, արդէն վաղօ-
ք զգաստացած կնոջ ընկերութիւնը հազիւ

թէ կարող լինի զրաւել ձեզ: Սակայն ձեր այս-
տեղ գտած բարեկամութիւնը զոհաբերութեան
արժանի է: Դուք նման էք իմ եղբօրը, որից
ես վաղ զրկուեցաի. այս նմանութիւնն արդէն
եկեղեցում դիպել էր աչքիս, ուստի և շատ
շնորհակալ եմ, որ եկել էք իմ տունը:

Նա խոնարհեց իւր աչքերը վարպետօրէն
կեղծաւորած շփոթութեամբ, և ժպտալով դէպի
ինձ մեկնեց իւր աջը, որ ես վերիվերոյ շօշա-
փեցի շրժունքով:

— Ի նշան բարեկամութեան, ասաց նա
կիսատ ձայնով:

Իմ բախտից այդ իսկ միջոցին ներս մըտ-
նող նոր հիւրելի գալուստը ազատեց ինձ պա-
տասխան տալու հարկից, որ չէր կարող ան-
կեղծ լինել: Նորամուտ հիւրերն էին մի քանի
հոգեւորականներ — աշխարհային մարդիկ, որոնք
իսկոյն սկսան իբրև մի հին բարեկամի հետ
վարուել հետո: Կոմսն էլ կրկին ներս մտաւ և
մի քանի խօսք շնչեց տիրուհուն: Այնուհետև
բոլորը վերկացան ու մտան դաշնամուրի դահ-
լիճը, ուր տանտիկինը նոր նոր երգեր նուազեց
իւր հոմանու դաշնակցութեամբ:

Երգչուհու միրուն ձայնը հնչում էր պայ-
ծառ գեղգեղով, և ես լաւ նկատեցի, թէ ինչ-
պէս նա երբեմնակի հայեացք էր նետում դէպի

այն մութ անկիւնը, ուր ես էի կանգնած պատի մօտ, ամեն մի նուազից յետոյ մեքենաբար ձայնակցելով ընդհանուր ծափահարութեան։ Ես անդադար միտս էի բերում մի ուրիշ ձայն, որ լսած էի վիլլայում։

Հանդարտ ներս մտան համազգեստ սպասաւորներ և արծաթէ ափեներով լսուած բերին պաղպաղակ և օշարակ։ Երգեցողութիւնը հատաւ, սկսան զրուցել ու խնդալ. եկաւ իւր փայտի վրայ յենուելով և' ալեոր զօրավարը ու պատճեց ուրախութեամբ, թէ վրայ վրայ վեց խաղ է տարել։ Յետոյ հարցրեց ինձ, թէ արդեօք ես էլ խաղալ դիտեմ, և երբ ասացի թէ այն, հրաւիրեց, որ միւս օրը իւր մօտ դամ լսաղալու համար, և ապա կանչեց սպասաւորին, որովհետև իւր քնելու ժամը հասել էր։ Ըսդ արդգէն մեկնելու նշան էր։ Ես դարձեալ մի խորհրդաւոր ժամիտ ընդունեցի տանտիկոջից ու շտափեցի ամենից առաջ թողնել դահլիճը, վասն զի սաստիկ փափագում էի մենակ լինել և խոկոյն փարատել այն պժողալի զդացմունքները, որոնք պաշարել էին ինձ այն զիշեր։

Սակայն չկարողացաւ ազատուիլ նրանց բեռից, մինչև որ լաջորդ օլը, երեկոյեան վերջալուսին, դարձեալ քայլերս դէպի վիլլան չուղղեցի։ Ես դիտէի, որ ներս մտնելն արդելուած

էր, բայց ես ուրիշ բան չէի էլ ուզում, եթէ ոչ վանդակաւոր դրան միջով ներս նախել և նշմարել զէթ։ Նըա զղեստի քղանցքը կամ թէ զլխարկի ժապաւէնը։ Բայց ահա նա ինքն էր կանգնած պատշպամը վրայ՝ մենակ և աչքերը դէպի քաղաքն ուղղած, ասես թէ ինձ սպասելով։ — Առաջին բոպէին մենք բաւական համարեցինք միայն աչքերով ու ձեռքերով սղջոյն տալու մէկ մէկու. իսկ յետոյ նա նշան արաւ, որ կամենում է վայր իջնել, և խոկոյն փոքրիկ դռնից դուրս դալով վազեց դէպի ինձ երեսը վառուած բերկութիւնից ու սիրուց։ Նա մեկնեց ինձ իւր աջը վանդակի միջով։ Երբ որ ես հարցմունք արի, թէ միթէ իրան դրառում կանգնած պիտի մնայի, նա յուշիկ զլխով արաւ և ձեռը որտին դնելով ասաց.

— Այնու ամենալիւ դու հօ սրա մէջ ես։ — Յետոյ մենք մի մանկական, երկայնաբան ու քաղցր սիրային բարբաջանքի բռնուեցանք, և երբ որ ես երեկուալ այցելութիւնս պատմելով մի չերծ խօսք ասացի նրա թշուառ հօր մասին, նա արագ բռնեց իմ աջից ու համբուրեց, լառաջ քան ես կարողացաւ դէմ կենալ։ Մօր և նրա անպատեհ ընթացքի մասին ոչ մի բառ չիշեցի. օրիորդը լաւ հասկացաւ իմ լռութիւնը։

—Սակայն վերստին այնտեղ գնա, ասաց
նա, և արա հօրս համար, ինչ որ միայն կա-
րող ես. շատ չի անցնիլ, և նա քեզ անշուշտ
կըսիրէ:

Եւ ապա, երբ ես նրանից մի համբոյք
խնդրեցի, նա վանդակին դէմ արաւ թուշը
և խկոյն փախաւ, լսելով որ մի քանի ձի-
աւորներ են արշաւում դէպի մեզ: Ինձ պէտք
եղաւ հեռանալ՝ առանց յագեցնելու և ոչ մինը
սրտիս անբաւ տենչանքներից: Խոստովանում
եմ, որ նոյն բոպէին առաջին անդամ կասկած
ընկաւ սրտիս մէջ նրա զգացմունքների ջերմու-
թեան մասին: Ինձ լաւ յայտնի էր, որ իտա-
լական աղջիկները ընդհանրապէս պարկեշտ են
վարվում—յետոյ, իբրև ամուսիններ, և՛ս աւելի
անսանձ կեանք վարելու համար, Սակայն մին-
չեւ անդամ վանդակի ետեւից շրթունք չտալ...
Բայց հետեւալ իսկ վարդկենին ես դարձեալ
միտքս բերի նրա խօսքերը, նրա հայեացքը, և
վշտերս փարատուեցան:

Երեկոյան ժամին ես ի հարկէ ճշդիւ դնա-
ցի ալեոր զօրավարի մօտ, և նա խկոյն հրա-
ւիրեց, որ նստեմ դօմինօի սեղանի առջև: Այս
անդամ հիւրերի թիւն երեկուանից նուազ էր:
Դերունի կանոնիկոսը նստած էր պատուհա-
նի խորշում և սաստիկ խորդալով քնում էր:

Տանտիկինը չէր փակուած իւր սենեակում, այլ
նստած էր մեր սեղանից ոչ հեռու մի բազմոցի
վրայ, և նրա հանդէպ գտնուող երկարահասակ
տարփաւորը առաջուանից էլ աւելի դառնասիրտ
էր երևում: Տանտիկինը նրան մի ոօման էր
տուել բարձր ձայնով կարդալու համար: Կարդա-
լիս նա ստէպ սիալվում էր: Վերջապէս նա դէն
ձգեց գիրքը, մի կոպիտ լիշոց ասելով, որ սովո-
րաբար անվայել է գործածել բարեկիրժ հա-
սարակութեան մէջ: Նրա տիրուհին վեր կացաւ
տեղից, նրան նշան անելով, որ հետեւ իրեն դէ-
պի միւս սենեակը, և այստեղից խկոյն լսելի
եղաւ մի կիսաձայն ու կրքոտ վէճ, որից ես
այսքան միայն հասկացայ, թէ կինը սպառնում
էր բոլորովին փակել կոմսի առաջև իւր տան
դուռը, եթէ նա իւր վարմունքը չփոխէր:

Դերունին, որ շատ դոհ էր իւր խաղից,
մի վայրկեան ականջ դրաւ:— Ի՞նչ է պատահել
նրանց մէջ, ասաց նա:

Ես ուսերս թոթուեցի: Նրա դէմքի վրայ
մի տարօրինակ յուզմունք երևցաւ. նա
հառաչեց և մի բոպէ վարանած մնալով, չէր
իմանում ու ինչ անել: Յետոյ թիկնաթո-
ոփ մէջ թաղուեցաւ և կարծես թէ սկսաւ
երազել:— Կանոնիկոսը քնից զարթեց, ընչախոտ
քաշեց և տուփը տանտէրին առաջարկեց: Այս

բանից յետու զօրավարը վերստին հանգստացաւ, և մենք զուարթ զուարթ շարունակեցինք մեր խաղը: Երբ ես վերջապէս վեր կացաւ մեկնելու համար, նա ինդրեց, որ դարձեալ զամ նրա մօտ, աւելցնելով թէ ինձ հետ նա աւելի սիրով է խաղում, քան թէ Գօն Վիջիլիո կանոնիկոսի հետ: Եւ այդ ասելիս նա սիրալիր ու սրտագին մտերմութեամբ սեղմեց իմ աջը, ցոյց տալով, որ տկարութեան մէջ անգամ սլահպանել էր հին ասպետի համոյական ձեւերը:

Այս անգամ տիկինն աւելի սառն արձակեց ինձ, քան թէ երէկ. սակայն, ինչքան որ նշմարեցի, միայն կոմսի պատճառով, որի հետ արդէն հաշտուած էր թւում:

Եւ ես չըսխալուեցաւ. որովհետև հէնց միւս օրը, երբ կոմսը հեռացաւ տանից մի փոքրիկ զրօսանք անելու մտքով, կինը դարձեալ իւր ջանքերը նորոգեց ինձ թակարդի մէջ որսալու համար: Ես ձեանում էի մի անփորձ, միամիտ, համբակ, որ իւր չերմ երկիւղածութեան մէջ ոչ մի բան չէ լսում, չէ տեսնում, չէ հասկանում, և լաւ նկատում էի, որ կինը չէր հաւատում իմ այդպէս լինելուս: Սակայն ես վախենում էի, որ նա իւր ջանաղրութեան չնչին արդիւնքը տեսնելով, ևս աւելի չըգրգռուէր՝ ինչ զնով էլ լինի յաղթելու իմ սառյդ կամ կեղծ սառնու-

թեան: Եւ իրօք նա այնպէս ուժգին էր յառաջ մղուել զալոյթից, որ մինչև անգամ կոմսի վերադառնալուց յետով էլ իւր ընթացքը չփոխեց: Եղելութիւնը տան միւս բարեկամներն էլ իմացան Ես լսեցի միր առևտրական ընկերից, թէ արդէն քաղաքի մէջ էլ զրոյց է լինում իմ մասին. նա շնորհաւորում էր իմ յաղթանակն և չէր գուշակում, թէ ինչ հալի մէջ էր իմ սիրտը: Ես լաւ տեսնում էի, որ այլ ևս մի օր անգամ պէտք չէր կորցնել իմ բուն դիտաւորութիւնը յալտնելու համար:

Երիտասարդ կոմսը օգնեց ինձ ելք տալու գործին:

Մի երեկոյ նա սպասում էր ինձ իմ պանդոկում: Երբ որ ես վերադարձայ, նս սառն քաղաքավարութեամբ ողջունեց ինձ և կարճ ու աղդու խօսքերով յայտնեց, որ ես կամ դադարեմ զօրավարի տունը յաճախել և կամ թէ պատրաստ լինիմ մի սւրիշ տեղ հանդիպել իրեն: Ասաց, թէ ես օտարական լինելով դեռ բաւական ծանօթ չեմ իւր երկրի սովորոյթներին, եթէ ոչ նա վազուց արդէն հոդ տարած կըլինէր զգուշութիւն աղդելու ինձ:

Պատասխանեցի, որ նա այլ ևս քսան և չորս ժամ համբերէ տեսնելու համար, թէ ոչ մի բան այնքան ծիծաղելի չէր կարող լենել, որ-

քան մի ոստիութիւն մեր երկուսի մէջ: Նա ապշեցաւ իմ վրայ. բայց որովհետև դէմքից չէր երևում, որ ես միտք ունենալի աւելի երկար մեկութիւններ տալու նրան, ողջունեց ինձ ու դնաց:

Միւս օրն ես գիտենալով որ ծերունի զօրավարը շուտ է վերկենում, վաղօրօք գնացի նրա մօտ և գտայ նրան ննջարանում, ուր նա զուարթ նստած էր մի երկար թիւրքի ըռող քաշելով. իւր չորս կողմը նա դիմել էր թղթից ձեւած պատկերներով լիքը տուփեր և քրքրում էր նրանց մէջ: Ինձ տեսնելիս նա ակներև ուրախութեամբ մեկնեց աջը, դովից որ առաւօտեան էլ գալիս եմ իւր մօտ, խնդրեց, որ ես էլ ծիսմ և երբ ես հրաժարուեցայ, — բըռնի տուաւ ինձ, լիշատակի համար, երկու հատ թղթի ասպետ, որ իւր ասելով ամենալաւերն էին: Սիրոս տրտմեցաւ, երբ միտքս բերի, թէ իմ բախտը այդ խեղճուկ ալեռի ձեռքումն էր: Սակայն հէնց որ մի բառասցի նրա դստեր մասին, զարմանալով տեսալ, որ նրա դէմքի արտայայտութիւնը բոլորովին փոխուեցաւ: Նա զգաստ ու լուրջ դարձաւ, և նրա ճակատի գիծը ցոյց էր տալիս, թէ նա մինչեւ անդամ այս խնդրի վրայ էլ դժոարանում էր իւր մտքերն ամփոփել: Ես

չթաքցրի նրանից և ոչ մի բան, ինչ որ պատահել էր մեր առաջին հանդիպումից սկսած մինչեւ այն ժամը: Նա շարժում էր իւր գլուխը համակրութեան նշանով, և երբ ես խօսում էի սիրով վրայ, նրա աչքերը վառվում էին և նա նայում էր դէպի երկինք մի այնպիսի գորովանքով, որ արդարեւ սրբազան վեհութիւն էր տալիս նրա երեսին: Յետոյ ես պատմեցի նրան իմ տնային հանգամանքները, աւելցնելով թէ շատ կըցանկալի իմ հայրենիքը տանել հարսիս, եթէ նա, այսինքն հայրը յօժար լինէր շնորհել ինձ իւր գանձը. բայց թէ նրան իւր սիրասուն զաւակից ըլզրկելու համար՝ ես պատրաստ էի մնալ մի քանի տարի և նոյն իսկ Բօլոնիայում: Նա բռնեց իմ ձեռքից և այնպէս սեղմեց, որ ես զարմացայ նրա զօրութեան վրայ. ապա թէ քաշեց ինձ դէպի ինքն և առանց մի բառ ասելու այնքան համբուրեց ինձ, որ վերջապէս թուլացաւ և բաղկաթոռի վրայ ընկաւ: Սակայն մի կարճ դադարից յետոյ նշան արաւ, որ վերցնեմ իրեն, և ոտքի կանգնելով ասաց.

— Գու կըստանաս իմ գանձը, որդեակ իմ, և ես գոհ եմ Տիրոջից, որ նա ինձ արժանի արաւ մինչեւ այս ժամն ապրելու: Ե՛կ գնանք կնոջս մօտ և յայտնենք նրան այս լուրը: Հէնց առաջին անդամ քեզ տեսնելիս գուշակել էի,

որ դու բարի տղաւ ես. և եթէ ես տասն աղջիկ էլ ունենալի, աւելի լաւ փեսաներ չէի ուզենալ նրանց համար: Բայց տես, տես թէ այդ չար Բիշէթթան ինչպէս թաքուն սիրահար է ճարում իւր համար: Սակայն նրանք բոլորն էլ այդպէս են. երբ որ բանը սիրոյ հասնի, էլ ոչ մէկին չէ կարելի հաւատալ—ոչ մէկին:—Այս խօսքերի ժամանակ նրա դէմքի վրայ վիշտ ու տագնապ երևցաւ, ևնա յոդւոց հանեց, տսես թէ մի բան լիշելով: Նոյն ըոպէին նա ինձ կըրկին համբուրեց, ականջից քաշեց, աւազակ, կեղծաւոր ու դաւաճան անուանեց, և թելից բոնած դուրս տարաւ, առաջնորդելով դէպի իւր կինը, որի սենեակը դտնվում էր տան միւս կէսում:

Նախասենեակում մեր դէմ ելու մի սպասուհի, մեծ մեծ աչքով նայեց վրաս և տիրուհուց թոյլտութիւն խնդրելուց յիտոյ՝ ներս թողաւ նախ զօրավարին, ասելով թէ ինձ ընընդունելը դեռ շատ վաղ է: Այդ բանին ես շատ ուրախացաւ, թէև սպասելն էլ շատ ծանր էր: Ներսում խօսուած բաներից ոչ մի բառ չէր հասնում ինձ. միայն թէ ալւոր պարոնի ձայնը հետզհետէ սաստկանում էր, այնպիսի հրամայական հնչումներ արձակելով, որ ես գեռչէի լսել նրա բիրնից: Յետոյ վերստին մի եր-

կար, շտապ շշունջ լսելի եղաւ և վերջապէս դուռը բացուելով, սենեակից սիզաճեմ դուրս ելաւ ծերունին, որ ասես թէ մի յաղթանակ տարած լինէր:

—Նա քոնն է, որդեակ, ասաց նա և քոնըն է հաստատ: Կինս ողջունում է քեզ: Առաջ նա ուզում էր ընդդիմանալ ինձ լիմար յիմար պատճառներով: Նա ունի չոռմում մի անմիտ քեռորդի, որ մի տարի առաջ այստեղից մեկնելիս ասել էր, թէ Բիշէթթալին ինձ համար պահեցէք, ես նրան կին կ'առնեմ: Սակայն այդ մի դատարկ հանաք էր, մինչդեռ ես ու լու ծանր ենք նայում գործի վրայ, և քեզ էլ պատկանելու է իմ աղջկը, Ամադէօ: Աշմարիտ է, հառաջեց նա, ես շատ բան անտես եմ թողնում. մարգս որ ծերանում է, սանձերն ընկնում են իւր ձեռքից: Բայց կան և այնպիսի բաներ, Ահադէօ, որոնք վերստին կարող են մինչեւ ատամներս վառել ինձ կռուի համար: Այս քեզ իմ աջը. նա քո կինը կըլինի: Այս երեկոյ մեզ մօտ եկ. դու նրան այստեղ կըդտնես: Գրկիր ինձ, որդեակ իմ, երջանիկ արա նրան. նա իւր ծեր հօրը սիրելուն համար հազար անգամ արժանի է եղչանիկ դառնալու:

Աստիճանների վրայ էլ ինձ մի անգամ իւր

սրտին սեղմելուց յետով, նա թողաւ որ գնամ: Երեկոյեան նորից զալիս ես տեսայ, որ տունը սովորականից աւելի էր լուսաւորուած և արդէն նախասենեակում կանգնած էին զանազան մարդիկ, որոնք ուշադրութեամբ դիտում էին ինձ: Ալեոր զօրավարը նստած էր բազկաթոռի մէջ դահլիճում, կանոնիկոսն էլ նրան հանդէպ. սակայն գօմինօի քարերը մարմարեալ սեղանի վրայ այլ ևս չէին շատում: Այժմ հօր դրկում նստած էր իւր աղջիկը, որ միանգամայն անպաճոյն ու անզարդ էր. նա միայն մի նունենու ծիլունէր մտղերի մէջ և այնպէս էր փարուել ծերունու վզին, որ կարծես թէ հիւրերի շրջանից քաշուելով, իւր միակ ընկերին էր ուզում ապաւինել: Ինձ նշմարելուն պէս վեր կացաւ և անշարժ սպասեց, իրը անդրի, մինչև որ ես աջ տուի նրան: Նա արագ ակնարկեց դէպի սօֆան. այնտեղ շքեղ հաղուստով, թաւ թաւ մազերը մերկ ուսերի վրայ թողած, կոլոր ու սպիտակ բազուկը կարմիր մետաքսեայ բարձին դրած՝ բաղմել էր մալը. նո անշուշտ կամենում էր իւր պայծառ տեսքով նսեմացնել օրիորդի կուսական գեղեցկութիւնը: Նրա կշտին դարձեալ ինքնիշխան միապետի վէսութեամբ նստած էր երկար կոմսը, որ հաճեցաւ զիջանել զլուխ տալու ինձ թեթև կերպով: Երբ ես իմ հարսի ա-

չից բռնած մօտեցայ այդ երկուսին, լաւ տեսալ, որ տանտիկնոց երեսի գոյնը մէքիչ թռել էր: Այնու ամենայնիւ նա ողջունեց ու շնորհաւորեց ինձ ամենազբաւիչ ժամանակ և թողաւ որ իւր աջը համբուրեմ. ապա թէ ինքն էլ համբուր դրօշմեց Բիչէթթալի ճակատին: Աղջիկն իրը անկենդան ընդունեց այդ համբուրը: Միայն թէ նրա ձեռքի դողալն ասում էր ինձ, թէ ինչ էր զգում այդ ըոպէին:

Այժմ պէտք էր ամեն կողմից մեծարանք ընդունել, և ես զարմանում էի սիրուհուս անվրդով հաստատութեան վրայ, որով նա դիմանում էր այդ շողոնութեան ալիքներին: Հալրն անդադար նայում էր մեզ վրայ ամենամեծ երջանկութեամբ: Յետոյ նրա նշան տալովը մենք նստանք պատուհանի խորշում, ուր իրար դէմ երկու աթոռ էր դրուած, իսկ ինքը սկսաւ դօն Վիշիլիօի հետ գօմինօ խաղալ: Ճուտով մենք իսպառ մոռացանք, թէ ուր ենք: Մեր շուրջը հնչող շշուկից ոչ մի բան չէր հասնում մեր սկանջին: Գրսում փողոցի մի կողմից դէպի միւսը քաշուած չուանի վրայ մի նսեմ լապտեր էր վառվում. բայց նրա լոյսը բաւական էր, որ ես իմ հրեշտակի աչքերի մէջ նայէի և նրա ժպտով զմազէի:

Հիւրերն այս անդամ սովորականից ուշ դուրս

Ելան: Ճամպայն բերին, և մի արքեպիսկոպոս, որ նոյն միջոցին հովուական շրջագայութեամբ քաղաք էր եկել, բաժակ առաջարկեց նշանուող-ների կենացը: Արբազան հայրն աշխատում էր մի առանձին սէր ցոյց տալ ինձ. նա հրաւիրեց ինձ նստել իւր կառքն և յանձն առաւ մինչեւ հիւրանոցը տանել ինձ: Սակայն հէնց որ մենք մենակ մնացինք կառքի մէջ, նրա կեղծաւոր բարեկամութեան բուն պատճառը յայտնի եղաւ:

— Գուք կալվինական էք, հարցըեց նա ինձ:
— Այն, պատասխանեցի ես:

— Գուք այդպէս չէք մնալ, ասաց նա մեղրակաթ ժպտով. ձեր այստեղ գտած սիրով դուք աւելի մեծ վրկութիւն ձեռք կըբերէք: Եկէք վաղն իմ մօտ. մենք կըխօսենք այս մասին:

Ես գնացի նրա մօտ. սակայն մազի չափ անզամ թոյլ չըտուի նրան շեղել ինձ իմ որոշած սահմանից: Իմ մասին ես պահանջում էի խղճի կատարեալ ազատութիւն, նոյնը ցանկալով և հարսիս համար: Իսկ մեր զաւակներին գալով՝ բանը թողնում էի մօր կամքին, մինչեւ որ նրանք կըզարդանալին և իրենք կ'որոշէին իրենց հոգու վրկութեան խնդիրը:

Նրամիտ սրբազանն իւր յոյսն ապագալիք վրայ դնելով, առ այժմ գոհ երւցաւ իմ տրա-

մաղրութիւնից: Սակայն որովհետև ինքը հեռանալու էր, սւստի դործը յանձնեց մի երիտասարդ հովուի մի վանական կրօնաւորի, որ այն աստիճան թիւր ու կըքոտ կերպով միջամտաւ, որ ես մի անպատեհ քայլ չաներու համար՝ լաւ համարեցի վերջապէս բոլորովին թողնել նրան: Այս բանի համար շատերը վրասբարկացան, ինչպէս որ պարզ տեսնում էի իմ զոքանչի մօտ հաւաքուող հիւրերի դէմքից: Բայց ես համբերում էի այս վիճակին, որովհետեւ հայրն առաջուայ պէս մտերիմ էր ինձ հետ և տանտիկինն էլ չէր զրկում ինձ իւր սառն բարեկամութիւնից՝ դէթ արտաքուստ:

Նոյն ինքն սիրուհիս, որից ես բնաւ չէի թաքցըել մտքերս, հաւանեց վճռիս, թէ բոլոր այս տեսակ պահանջները պէտք էր մերժելով մերժել ապագալին:

— Ի՞նչ են ուզում նրանք, ասաց նա: Միթէ, Ամադէօ, քեզ ու ինձ համար ուրիշ դժոխսք պիտի լինի և ուրիշ երկինք: Եթէ ես արքայութիւն էլ մտնելու լինիմ և գու ալնտեղ չլինիս, ես դուրս կըդամ միջից և չեմ հանգստանալ, մինչեւ որ քեզ նորից չըդտնեմ:

Ելք նա այսպէս էր խօսում, երկինքը կըկին պարզվում էր ինձ համար, և ես ոչ վտանգ էի գուշակում, ոչ էլ բախտիս ուշանալուց եր-

կնչում: Մենք որոշեցինք հոկտեմբեր ամսին կատարել հարսանիքը: Ես դեռ յուսով էի դիմանալու մի երկու ամիս: Մի բան միայն վրդովում էր ինձ, այսինքն թէ չնայելով իմ նշանուելուս ծանուցագրին, մինչև այժմ ոչ քոյլս էր պատասխանում ինձ, ոչ էլ վիսամ: Ինչքան որ մենք իրար ճանաչում էինք, ես ոչ մի արգելք չէի սպասում նրանց կողմից իմ պսակուելուս դէմ, և նրանց լոռութեան համար ուրիշ պատճառ չէի գտնում, բայց եթէ մի հիւանդութիւն և կամ որ և է տղէտ, որ նրանք երեսի թէ ուզում էին թաքուն պահել ինձանից: Հետևաբար որդքան էլ կեանքը զուարժ ժպտար ինձ մօտկից, բայց և այնպէս այս հոգսը օրէ որ սաստկանալով տանջում էր ինձ: Վերջապէս երեք տագնապալից շաբաթներից յետոյ տենչչալի նամակը եկաւ հառաւ: Գրողը միայն փեսաս էր: Նա զրում էր, թէ Բլանշը, այսինքն քոյլս, վտանգաւոր ծնունդից յետոյ մի դժուար հիւանդութեան հանդիպելով, դեռ այնպիսի կասկածելի դրութեան մէջ է, որ տակաւին չեն յայտնել նրան իմ հարսնախօսութեան գրդուէ լուրը, և թէ նրանք երկուսն էլ շատ միշտարուած կըլինէին, եթէ ես դէժ մի քանի օրով այցելութիւն անէի նրանց:

—Պէտք է որ գնաս, ասաց ինձ սիրակա-

նըս, իրը ես առանց մի բառ խօսելու տուի նրան նամակը. պէտք է որ վաղը մեկնիս այստեղից: Տեսնենք, թէ ինչպէս կըդիմանամ ես առանց քեզ: Սակայն տուն հասնես թէ չէ, իսկոյն նամակ զրիր ինձ, և շուտ շուտ զրիր: Ո՛հ, ինչ ասես չէի տալ ես՝ քեզ ուղեկից լինելու համար. բայց այդ կարելի բան չէ: Ողջո՞յն Բլանշին. ասա նրան, որ ես նրան սիրում եմ, և տար նրան այս համբոյրն իւր քրոջից:

Նա ուժգին զրկեց ինձ և շրթունքս համբուրեց. այդ առաջին համբոյրն էր, որ շնորհեց ինձ: Որովհետեւ չնայած որ ես շատ անգամ նրա հետ մենակ մնալիս՝ թէ հանաքով, թէ լրջութեամբ աղաչել էի, որ շատ խիստ չվարուի հետս, նա միշտ անողոք էր մնացել: Որքան զարանում էի ես այդ զգուշութեան վրայ: Բայց հերեք էր, որ նա դէժ մի բառ ասէր ինձ և ոքանչելի ժալուկ մեկնէր ինձ իւր աջը, և ահա բարկութեան կամ տարակուսի նշոյն անդամ կորչում էր սրտիս միջից:

Ես հրաժեշտ առի նրանից ամենամեծ վստահութեան զգացմունքով, թէ վերադարձիս ամեն բան նոյն վիճակի մէջ կըդտնեմ, ինչպէս որ թողել էի: Ֆերունի զօրավարը ի սրտէ տրտմեցաւ բարեւ մնալի ժամանակ և բնաւ չէր ուզում բաց թողնել ինձ իւր զրկից: Տանտիկինն

էլ այն աստիճան կարեկցութիւն լայտնեց քրոջտ
համար և այնպէս վարպետ խաբեց ինձ, որ
ճանապարհին, անցեալ բաների վրայ մտածելիս
ես մտքով ներողութիւն էի խնդրում նրանից,
մինչդեռ առաջ կշտամբում էի նրան: Իմ իրեղէն-
ների մէկ մասն ես թողի վելլայում, որովհետև
նշանուելուս օրից սկսած այնտեղ էի բնակվում,
սիրալիր գգուանք գտնելով ալեոր սպասաւորից
ու մտերիմ Նինայից: Ես հաշուում էի, թէ մէկ
ամսից յետոյ անշուշտ կըվերադառնամ մինչև
անդամ քրոջտ էլ, փեսայիս էլ հետո բերելով,
որպէս զի նրանք էլ ներկայ լինէին հարսանիքիս:
Նինան քաղաք պիտի քաշուէր սիրականիս ըն-
կերակցելու համար: Այսպէս ուրեմն ասես թէ
ամեն ըան լաւից լաւ կարգի էր բերուած, և
այս բաժանումն ոչ այլ ինչ պիտի լինէր, բայց
եթէ մի զոհ, որ ես մատուցանելու էի չաս-
տուածների նախանձին, յառաջ քան նրանք
թոյլ տալին ինձ երջանիկ լինելու:

Տանն էլ ես ամէն բան աւելի լաւ վեճա-
կում դտայ, քան թէ երեակայել էի իմ երկար
ուղևորութեան տագնապիչ ժամերին: Բլան-
շըն արդէն վտանգից ազատ էր և մեր կըր-
կին տեսակցութեան խնդրութիւնն և այն բո-
լոր լաւ բաները, որ ես նրան պատմում էի,
կարծես թէ նրա կազդուրմանը նպաստում էին:

Բայց և այնպէս նրան հարսանիքիս մասնակից
անելու մասին մտածելն անդամ անհնարին էր՝
արդէն երեխայի պատճառով, որից նա չպիտի
կարենար բաժանուիլ: Փեսայիս էլ պէտք էր
տանը մնալ: Այդ միջոցին մեր առևտրական
գործերն այնպիսի յաջող ընթացք էին ստացել,
որ նոյն խոր մեր երկուսի ներկայութիւնն էլ
անհրաժեշտ էր: Այնու ամենայնիւ նրանք դր-
գում էին ինձ շուտով ճանապարհ ընկնելու,
և ես լաւ տեսնում էի, որ իմ մնալն արդպիսի
հանդամանքներում աւելի ծանրութիւնն կըլինէր
նրանց համար, քան ուրախութիւնն:

Որովհետև թէպէտ մենք պայման էինք
դրած ստէպ ստէպ իրար նամակ դրելու, և ես
խօսքիս հաւատարիմ մնալով ոչ մի փոստի օր
չէի փախցնում, — Քոջնիալից մի լուր անդամ
չէր զալիս: Այսողջ շաբաթ ես շարունակ աշ-
խատում էի իմանալ, թէ ինչ էր արդեօք դրա
պատճառը. բայց երբ որ իմ ֆընէվ գալուս
երկրորդ շաբաթն էլ լրացաւ, և ես դարձեալ
կենդանութեան նշան ըլստացայ ոչ իմ սիրա-
կանից, ոչ էլ նրա տնալիններից, — այնուհետև
մի սոսկալի տագնապ տիրեց իմ հոգուն: Ես
սփոփովում էի միայն այն մտքով, որ մի հան-
կարծահաս դժբախտութիւն պատահած չէր լի-
նիլ, եթէ ոչ մեր այնտեղի առևտրական ըն-

կերն անշուշտ լուր կըտար ինձ: Սակայն ո՞վ
երաշխաւոր կըլինէր ինձ, թէ նա ինքն էլ
բացակայ չէր, և կամ եթէ մեր նամակները
կորած կամ բռնուած լինէին, նրա գրեթն էլ
նոյն միճակին չէին հանդիպած:

Վերջապէս ինձ պէտք էր ճանապարհ
ընկնել, եթէ ոչ խելքս կըկորցնէի: Անհնարին է
նկարագրել, թէ ինչ էլ քաշում ես գիշեր ցե-
րել կառքի մէջ ընկած յետ շտապելիս: Ես
զարհուրեցայ, երբ որ քաղաքից մի մղոն հե-
ռու, մինչ նոր շորեր հագնելու վրայ էի, դէմ-
քըս հայելում տեսայ. ո՞վ կարող էր գուշակել,
թէ այսպիսի երեսով պիտի վերագառնայի հար-
սիս մօտ:

Արշալոյսը դեռ նոր էր բացուել, երբ ես
արագ մտայ ինձ լաւ ծանօթ փողոցի մէջ և
հրամայեցի կառապանիս կանգ առնել վիւայի
վանդակաւոր դրան առջև: Ես գուրս թռայ
դողդոջ ծնկներով և հնչակը քաշեցի: Պէտք
եղաւ սպասել փոքր ինչ, մինչեւ որ ծեր Փա-
քիօի գլուխը աչքիս ընկնէր փոքրիկ դռնից:
Նա սաստիկ վախեցաւ ինձ տեսնելիս և ժա-
մանակ էլ ըզդտնելով իւր հին բաճկոնը մերկ
կրծքի վրայ կոճկելու, այսպէս շփոթուած դէ-
պէ ինձ վազեց, որ ես հեռուից արդէն դոչե-
ցի. Նա մեռել է:

Թերունին շարժեց իւր գլուխն և խկոյն
դուռը բաց արաւ: Սակայն նրա շունչն այն-
պէս բռնուել էր սարսափից, որ ես միայն
կտոր կտոր կարողացայ բան քաղել նրա շըր-
թունքից: Իմ գունատ երեսը նշմարելով նա
կամենում էր խնայել ինձ, մինչ դեռ ոչ մի
բանով չէր կարող այնպէս անգութ տանցել ինձ,
ինչպէս իւր դանդաղութեամբ:

Թաքուն հնարուած բաներից շատը նա
ինքն էլ հարկաւ չգիտէր, և ինչ որ գիտէր,
լսած էր միայն Կինալից. սակայն ես, որ լաւ
էլ ճանաչում մարդկանց, նոյն բոպէին ըմբռո-
նեցի գժոխալին մեքենայութեան բոլոր գաղտ-
նիքը:

Հէնց որ ես թողնում եմ Բօլոնիան,—այն-
տեղ գալիս է չոռմից տանտիկնոջ քեռորդին,
որ արդէն վաղուց յանդգնել էր յոյս դնելու
հարսիս վրայ: Արդեօք նո՞ր էին կանչել նրան,
թէ նա առանց իմ բացակայութեան էլ ազատ
եկած կըլինէր,—չկարողացայ երբէք ստուգել:—
Ողորմելի էր նրա կերպարանքը, ասաց Փարիօն:
Պէսպէս արկածներից, խաղից ու շուայտ կեան-
քից նա բոլորսին մաշուած էր. բայց որովհե-
տև նա մի կարդինալի ազդական էր և հին
տոհմից, ուստի լաւ փեսացու էր համարփում:
Բիչէթթան երբէք չէր սիրել նրան և միշտ

ատել էր:—Ես բնաւ չեմ մոռանալ, շարունակեց ծերունին, թէ ինչպէս երեք տարի առաջ, հէնց այս պարտէզում, օրիորդը մի թունդ ապտակ տուաւ այդ պարոնին, երբ նա յանդգնեց պաշ անել իւր մօրաքրոջ դստրիկին: Այն ժամանակ նա ծիծաղելով երգում արաւ այդ հարուածի վրէժը հանելու, երբ որ Բիշէթթան նրա ամուսինը կըդառնար: Հիմայ բանն այն տեղ է հասել, որ նա կարող է իրադորձել իւր սպառնալիքը: Զօրաւոր մարդիկը նրա կողմն են, ինչպէս և մօրուն. և նրանք այնպիսի դժոխային պատիժներ են սպառնացել ալևոր հօրը, թէ որ նա իւր աղջիկը մի հերետիկոսի տալու լինի, որ խեղճ՝ ահից շուարած բոլորովին գուճ է եկել և մի բառ անգամ չէ խօսում այս գործի մասին: Բայց երբ նա տեսնում է Բիշէթթային, աչքերն արտասուքով լցվում են, և նա ամբողջ ժամերով երեխայի պէս հեկեկում է առանց մի բառ խօսելու իւր կնոջ հետ, որովհետեւ լաւ գիտէ, որ ամեն բանի բուն պատճառը հէնց նա է:

— Իսկ Բէաթրիչէն, հարցրի ես, մինչ զայրութից արիւնս եփ էր գալիս երակներիս մէջ:

— Հա, Բիշէթթան, ասաց ծերունին: Ո՞վ կարող է հասկանալ նրան: Ակզբում, երբ նրանից պահանջել են, որ հրաժարուի կալվինա-

կան փեսալից, նա միշտ պատասխանել է: Ես ուխտել եմ Աստուծու առջև նրա ամուսինը դառնալու և եթէ ինձ սպանելու էլ լինին, հաւատարիմ կրմնամ ուխտիս: — Եւ նա չէ ուրացել իւր ուխտը, և երբ մօրուի քեռորդին նրա մօտ այցելութեան է եկել, Բիշէթթան բոլորովին սառն սրտով ասել է նրան. Ամենակին հոգ մի քաշէք, Թիշինօ: Եթէ Ամադէօն բնաւ անծանօթ էլ լինէր ինձ, ես ձեզ երբէք չէի սիրել: Եւ յետոյ երբ նա կամեցել է բռնել օրիորդի ձեռքից և նրան գեղեցիկ բաներ ասել, Բիշէթթան, Նինայիս ներկայութեամբ, տեղից վեր է կացել ու գոչել է. Թիշինօ, դուք մի թշուառ էակ էք, որ յանդգնում էք ձեռք տալ ձեզ չպատկանած բանին: Կորէք, ես ձեզ արհամարհում եմ: — Եւ այնուհետեւ բոլորովին չէ կամեցել տեսնել նրան: Բայց ինչպէս մեկնել, սիրելի պարոն, որ պսակը այնու ամենայնիւ կատարուելու է, — ինչպէս բայցարել, որ Բիշէթթան, Նինայի ասելովը, բնաւ արտասուք չէ թափում, ոչ մի խնդիր կամ պաղատանք չէ յայտնում ոչ հօրը, ոչ մօրուին, ոչ էլ ո՛ր և է ուրիշ մարդու, ոչ էլ գուցէ նոյն իսկ Աստուծուն: Նա հարկաւ ձեզնից նամակ չէ ստացել, ինչպէս որ դուք էլ չէք ստացել նրա զրածները, որ ես ինքս էի փոստ տանում. ո-

ըովհետեւ մեր նամակատան պարոնները երեւ-
թէ լաւ զիտեն պաշտօն վարել, երբ որ պէտք
է լինում հարս յափշտակել օտարականի ձեռ-
քից որ և է կարդինալի քեռորդու համար:
Բայց զարմանալին այս է, թէ—ինչու ինքն
Բիչէթթան այդպէս շուտ անձնատուր եղաւ:
Նա հօ չէր կարող ձեր հաւատարմութեան վրա յ
երկբայիլ: Նինաս ասում է, թէ նրան սպառ-
նացել են մի վանքի մէջ վակելու, եթէ Ռիչի-
նոյի կինը դառնայ: Դիցուք՝ վանք ասածդ
մեր Բիչէթթալին յարմար տեղ չէ. բայց ետ
կարծում եմ, որ վանք մտնելն աւելի լաւ կըլինէր
նրա համար, քան թէ այդ մարդու հետ ա-
մուսնանալը, քանի որ նա ձեզ է սիրում: Ինչ-
պէս ասացի՝ թշուառ խելքս այս բաներին չէ
հասնում, Նինաս էլ ըոլորովին մոլորուած է
մնացել:

Մինչ գեռ բարեսիրտ ծերունին ասում էր
ալդ բոլոր՝ առանց վրաս նայելու, ես միան-
գամայն ջարդուած ընկած էի վառարանի հան-
դէպ կանգնած աթոռի վրայ, ուր մենք աջ
աջի տուած սէր էինք երդուել մէկ մէկու:
Ես չէի կարող որ և է միտք ըմբռնել՝ այս,
զգալու, սիրելու և ատելու ոյժս անդամ կար-
ծես թէ յանկարծ կորել էր և կենդանութեան
շարժումն իսկ դադարել էր մարմնիս մէջ, ինչ-

պէս որ դադարում է մի ժամացոյց, երբ նրա
զսպանակը կտրվում է որ և է հարուածից:
Միայն բաւական երկար ժամանակից յետոյ ես
ողի առի հարցնելու, թէ Երբ պիտի լինէր
հարսանիքը:— Այսօր, ասաց ծերունին երկչու
ձայնով: Ես դէպի վեր թռայ. սարսափելի վըճ-
ռափամի մօտաւորութիւնն իմ թալուկը փա-
րատեց:

Փաբիօն բունեց իմ երկու ձեռքից և զար-
հուրելով նայեց դէմքիս:— Աստուծու սիրոյն,
զոչեց նա, ինչ էք ուզում անել: Չղիտէք, թէ
նրանք որքան զօրեղ են: Վստահ էք արդեօք,
որ մինչև երեկոյ կենդանի կըմնաք, թէ որ
այժմ փողոց դուրս գաք:

— Ես կ'երթամ այնտեղ, ասացի ես, կ'եր-
թամ ծալտած, կըկանգնեմ այս անզգամի առ-
ջե և կ'ասեմ նրան, որ մեղնից մէկը աւելորդ
է աշխարհումս: Զինուորական ատրճանակդ հօ¹
կարգին է, Փաբիօ. ուրիշ բան պէտք չէ ինձ,
թող ինձ:

— Նախ սպանեցէք, տապալեցէք ինձ այս-
տեղ, ասաց նա, և այնպէս պինդ սեղմեց թես,
որ չէր կարելի շուտ աղատուիլ նրա ձեռքից:—
Եւ զիտէք արդեօք, աւելացրեց նա, թէ ինչ
կ'ասէ մեր Բիչէթթան, երբ ձեր արարմունքն
իմանայ:

— Իրաւ որ, ասացի ես, և բոլոր ոյժս դարձեալ կորաւ: Այդ ես չգիտեմ, բայց ինձ պէտք է գիտենալ, եթէ ոչ խելքս կըցնդի: Թիւս բաց թող և զլխարկս տուր. ես պիտի գնամ նրա մօտ և ջարդեմ նրա տան բոլոր գուները. ի՞նչ ուզում է թող լինի—միայն թէ նրան տեսնէի:

Սակայն ալեսրը չթողաւ որ գնամ. նա կրկին նստեցրեց. ինձ աթոռի վրայ և ասաց.— Դուք գիտէք, որ ոչ ոք այնքան չէ սիրում ձեզ և օրիորդին և ծերունի զօրավարին, որքան որ սիրում է ալեսր Փարիսն: Ուստի հետեւցէք իմ խորհրդին և կուրօրէն մի զլորուիք փորձանքի մէջ: Եթէ կարծում էք, թէ ձեզ թողը կըտան նրա մօտ մտնել, չարաշար սխալ-վում էք: Հարսանիքի պատճառով այժմ տունը լիքն է նոր սպասաւորներով: Նրանք դուրս կը-վարեն ձեզ, եթէ դուք ուզենաք այս կերպա-րանքով հարսի մօտ գնալ: Լաւ է՝ ես գնամ. ինձ չեն վոնտիլ, թէև տանտիկինը շատ չէ սիրում ինձ: Ճատ որ նեղեն, աղջկանս կանչել կըտամ, և եթէ դուք մի տոմսակ տաք, հաւատացէք, որ ես փոստից աւելի լաւ կըհաս-ցնեմ: Նստեցէք պատուհանի մօտ և իսկոյն գրեցէք. եթէ չեմ սխալվում, մեր Բիշէթթան անպատճառ մի պատասխան կըտայ ձեզ:

Նա վազեց զրիչ ու թանաք բերելու. բայց

ես մի այնպիսի ողորմելի դրութեան մէջ էի, որ զրիչը ձեռիցս ընկնում էր, և սրտիս մէջ շառաչող փոթորկից ես իմ յատուկ խօսքերն անգամ չէի կարողանում հասկանալ:

— Բաւական է, ասաց ալեսրը. շատ խօս-քեր հարկաւոր չեն.— Հերիք է, եթէ իմանայ, որ դուք այստեղ էք: Եթէ այդ իմանալուց յետոյն էլ նա ուզենայ պսակուիլ, հարիւր նա-մակ էլ որ գրէք, աւելորդ կըլինի:

Այս ասելով նա գնաց: Սակայն դեռ չհե-ռացած՝ նա ինձ երդում անել տուաւ, որ ես թաքնուած կըմնամ ամայի տան մէջ և միայն նրա առջև կըբանամ.. դուռը: Այդ միջոցին ա-րեն արդէն ծագել էր: Ֆերունին նորից յետ գալով զինի և հաց բերաւ ինձ, որ կադդու-րուիմ: Յետոյ ես մենակ մնացի տան դերեզմա-նային լրութեան մէջ:

Ինձ անհնարին էր անշարժ մնալ մի տե-ղում: Ես պարտէզ մտայ. կամենում էի տեսնել այն նարնջենին, որի պտուղները նա քաղել էր ինձ համար,—այն նունենին, որի ոստը սիրոյ առաջին նշան էր եղել ինձ համար: Ամեն տեղ ես տեսնում էի նրա պատկերը, և որքան նա աւելի էր կենդանանում աչքիս առջև, այն-քան աւելի դժուարանում էի հաւատալ, որ նա ինձ մոռացած լինէր: Թէև ես բոլորովին յոդ-

նած էի զիշերուայ ճանապարհից, այնու ամենայնիւ ոչ զինին մօտեցը բերնիս, ոչ էլ հացը. Ես միայն մի նարնջի հիւթ քամեցի աղահ շրթունքով և փոքր ինչ զովացայ, ասես թէ այդ հիւթի հետ քաջութիւն ու յոյս ներշնչեցի: Յետոյ բարձրացայ տան աստիճաններով. և մէջէ մէջ անցայ բոլոր սրահներից: Նրա փոքրիկ սենեակում գեռ ամեն բան նոյն դրութեան մէջ էր, ինչպէս որ նա թողել էր. զիրքըն էլ բաց էր մնացել այն երեսի վրայ, որ կարդացել էր վերջին անգամ: Ես սկսայ կարդալ նոյն երեսի շարունակութիւնը. դրանք Պետրարկայի երգերն էին. նրանց քաղցր գաշնակը ամոքեց ու հովացրեց հոգիս: Ես հանեցի պատշգամբի վրայ նրա փոքրիկ եղեգնեայ նըստարանն և շարունակեցի կարդալ, ամեն մի տունից յետոյ դէպի փողոցը նայելով, որ տեսնեմ, թէ լրաբերը չէր գալիս: Հետզհետէ ես հանգստացայ և սիրու առի:

Այնու ամենայնիւ ես շանթահարի պէս վեր թռայ աժոռից, երբ նշմարեցի ծերուկին դրան առջււ:—Ի՞նչ ես բերում, գոչեցի ես դէպի նա: Սակայն նրա վշտագին դէմքից արդէն երևում էր բանի էութիւնը: Ես երերուն անդամներով վայր վազեցի աստիճաններից նրան դիմաւորելու:—Ինքներդ կարդացէք, ասաց նա.

գուցէ դուք աւելի լաւ հասկանաք, թէ ի՞նչ է նրա միտքը:

Ես խլեցի նրա ձեռքից բաց տոմսակը, որի վրայ Բէաթրիչէն շտապ շտապ հետևեալ բառերն էր գրել մատիտով. «Յաւիտեան սիրելիս —ինչ որ լինելու է, պիտի լինի: Մի հետևեիր փոխելու նրան, այլ հաւատացիր ինձ. Ես միայն քեզ եմ պատկանում: Դու ամեն բան կ'իմանաս, երբ որ մենք վերստին իրար տեսնենք՝ թերեւս շուտով. բայց երբ էլ լինէր այդ տեսակցութիւնը, ես միշտ քոնը կըմնամ»:—Եւ ապա տոմսակի լուսանցքում. «Թաքուն պահէիր քեզ. ամեն բան կորած է, թէ որ դու աչքի ընկնիս»:

Մինչ ես պշնած նայում էի այդ սակաւ տողերի վրայ, ծերունին պատմում էր ինձ, թէ չէր յաջողել տեսնել Բէաթրիչէին. միջնորդը նինան է եղել, բայց թէ սրանից էլ միայն այն է իմացել, թէ սինիօրինան գրեթէ չէ զարմացել իմ վերադարձի վրայ:—Ես նրան վագուց սպասում էի, ասել է նա: Յետոյ, երբ որ ներս է մտել աղախինը հարսի շորերը բերելով, նա պատուհանի մօտ կանգնած զրել է այս տոմսակը և խնդրել նինալին՝ ասելու հօրը, որ նա խորին լռութիւն պահպանէ և իմ վրայ ամենամեծ խնամք տանէ: Ապա թէ բոլորովին

Հանդարտ սրտով սկսել է քակել իւր մազերն և հրամայել է, որ հիւսեն պսակի համար: Նինայի ասելով Բէաթրիչէն տոմսակը գրելիս այնպէս հանդիստ է եղել, ինչպէս որ հանդիստ է անտանելի ցաւերին դիմանալու անկարող մարդը, որ պատրաստ է մեռնել և մեռնելիս կամենում է թղթին դրոշմել իւր վերջին կամքը: Նինան միշտ կարծում է եղել, թէ շատ լաւ է ճանաչում նրան. բայց թէ այժմ Բէաթրիչէն երկնային Տեսչութեան պէս մի անքննելի բան էր գարձել նրա համար:

Հապա Ես, Ես որ երևակայում էի, թէ ամենքից լաւ էի ճանաչում նրան,—ինչ հասկացայ ես նրա բառերը հարիւր անգամ կարդալիս: Եթէ նա չէր ուզում ինձնից զատ ո՞ր և է մարդու պատկանել, ինչո՞ւ ուրեմն չփախաւ ինձ մօտ, ինչո՞ւ չորոշեց ո՞ր և է վանք մտնել, մինչև որ ես հնար գտնէի նրան փրկելու: Ինչո՞ւ ամենայանդուգն միջոցներն անգամ աւելի դիւրին ու բնական չերևցան նրան, քան թէ այդ հլու հնագանդութիւնը մի բունի վիճակի, մի կապանքի, որ միայն մահը կարող էր խզել:

Բայց և այնպէս տոմսակի պարզ խօսքերի մէջ կամ մի բան, որ ինձ սիրտ էր տալիս, երբ որ ես վհատելու վրայ էի, և իսկոյն մեղ-

մացնում հոգիս, հէնց որ յուսահատութեան ու զարութեան նզովք էր մօտենում շրթունքիս: Ես մինչև անդամ կարողացայ քնել մի երկու ժամ և յետոյ փոքր ինչ բան ուտել, որ պատրաստել էր իմ հաւատարիմ ինամարկուն: Մինք չէինք խօսում. միայն թէ պսակի ժամը հասաւ թէ չէ, մենք վիճեցինք իրար հետ: Ես պնդում էի, թէ կամենում եմ անպատճառ այնտեղ լինել. նա ինձ սաստիկ ընդդիմանում էր: Վերջ ի վերջոյ իմ անդրդուելի հաստատութիւնը տեսնելով, նա ինքն օգնեց ինձ իւր շորերով ծպտուելու և հազցրեց ճակատիս մի տրոքուած յարդի գլխարկ, որ սովոր էր ինքը հագնել պարտէզի մէջ աշխատելիս: Բայց Ես էլ ձեզ հետ կ'երթամ, պարոն Ամադէօ, ասաց նա: Գուցէ հարկաւոր լինի բռնել ձեր ձեռքքը, եթէ դուք խելքներդ թուցնելու լինիք:

Գուցէ նա իրաւունք ունէր այդպէս ասելու: Սակայն երբ մենք հասանք եկեղեցին, հարսանիքի հիւրերն ու պսակուող զոյզն արդէն ներս էին մտել և բազմութիւնն այնպէս խուռն էր, որ մարդիկ իրար հրելով կանգնած էին մինչև լայն հրապարակ՝ հարսն ու փեսալի դուրս գալը գէթ մի անգամ տեսնելու համար: Ես դառն կերպով կշտամբեցի Փաբիօյին, որ նա խաբել էր ինձ պսակադրութեան

ժամի մասին. Նա կամակր արդարանում էր կը կնելով, թէ, ինչ որ լսել էր, այն էր ասել: Այսպէս մենք կանգնած էինք ամբոխում և զանգակների հնչիւնն այն աստիճան ախորժ էր ազդում իմ վրայ, որ ես նորից թմբրեցայ, մինչ որ յանկարծ լսելի եղաւ թէ—Ահա գալիս են: Ես անշուտ վայր կընկնէի, եթէ Փաբիօն ինձ չըբռնէր: Այնու ամենայնիւ աչքերս հաստատ ուղղել էի եկեղեցու բարձր դրան վրայ, որտեղից նա պիտի գուրս գար: Եւ ահա իրօք գուրս եկաւ նա, և զարմանք է, որ ես կարողացայ համբերել նրա տեսքին, — որ այդ տեսքն մինչեւ անգամ հանգստութիւն տուաւ ինձ, թէ նա գալիս էր փեսայի կողքից քայլելով: Փեսան Փաբիօյի նկարագրածին յար և նման մի մարդ էր, որին ես արդարե կարող էի կռուփիս մէկ հարուածով տապալել. նրա թօշնած դէմքի վրայ մի այնպիսի ժպիտ էր խաղում, որից արիւնս եռ էր գալիս: Նա յաղթական հպարտութեամբ ողջունում էր աջ ու ձախ, իւր գորշ ընչացքը վտիտ շրթունքի վրայ դրստելով: Իսկ հարսը, ընդհակառակն, ժողովրդի միջից անցնելիս՝ գնում էր խորհրդաւոր երեսով, հանգիստ յառաջ շեշտուած աչքերով, որոնք ոչ ոքի վրայ չէին նայում: Մի մանուկ փունջ տուաւ նրան: Նա ընդունեց փունջն ու համ-

բուրեց մանկան, և ես տեսալ մինչեւ անգամ, որ նա ժպտաց այդ միջոցին: Եթէ ես հեռու կանգնած չլինէի և կողքիս Փաբիօն չըդտնուէր, այն ժպիտը նշմարելիս ես կը ճեղքէի բազմութիւնն և գոռալով կըհարցնէի նրան, թէ ի՞նչպէս է կարողանում ժպտիլ այս օր: Սակայն տեսարանն աւելի շուտ անհետացաւ, քան որ ես պատմում եմ: Նրանք կառք նստան և արագ մեկնեցան: Նրանց ետևից գնացին նախ ծնողները—իմ խեղճ ծերունի զօրավարը բոլորովին գումար էր եկել իւր գոռոզ նորատի կնոջ կողքին,—յետոյ հիւրերն և բոլոր այն բարձրաստիճան եկեղեցականները, որոնք միշտ աղատ մուտք ունէին նրանց տանը:—Պսակ կատարողը ինքն արքեպիսկոպոսն էր, ասում էին կանայք իմ կշտին: Աղջիկն առաջ չէ ուզում եղել փեսային, բայց սրբազն հայրը խրատել է, որ գնայ: Իսկ այն միւսի մասին, որ կալվինական է, էլ ոչինչ չէ լսվում:—Հա, հա, աւելցրեց մի ուրիշ կին, լսել եմ, թէ նրա քոյրը մեռել է. այդ լաւ պատիտ է նրա համար, որ չէ ուզեցել յետ դառնալ իւր անօրէն հաւատից:—Եւ այս տխմար բարբաջանքը լսվում էր ամբողջ հրապարակում: Փաբիօն քաշեց հանեց ինձ այն տեղից և հեռաւոր պտուտներով յետ տարաւ դէպի վիլան: Թողի անել, ինչ որ ուզում էր.

իմ զօրութիւնը հատել էր. ես մի քնաշրջիկ մարդու պէս անզգայ էի դարձել:

Դեռ այժմ էլ, անցեալը մտաբերերելիս, ես չեմ կարենում հասկանալ, թէ ինչպէս դիմացայ այն օրը: Առվորաբար սաստիկ փոթորկուող բնաւորութիւնս այնպէս զսպուել էր մարմնիս յոգնութիւնից և իմ անքուն ուղեորութիւնից ֆընէվից մինչեւ այնտեղ, որ ես ամենասոսկալի բանն անզամ բութ անզգայութեամբ կրեցի: Երբ տուն հասալ, ես տատանում էի: Փարիօն ստիպեց ինձ մի քանի բաժակ գինի խմել մինը միւսի ետևից. դրանք այնպէս ազդեցին, որ ես ուշաթափ վայր ընկայ:

Երբ որ ուշքս յետ եկաւ, արդէն գիշեր էր: Երկար մտածեցի իմանալու համար, թէ ուր էի և ինչ էի քաշել: Պարզ երկինքը ներս էր նայում դրան բարձր ապակիներից և լուսնի մեղմիկ լոյսն երերում էր բէաթրիչէի մօր պատկերի վրայ, որ ասես թէ վշտահար ցած էր նայում անկողնիս վրայ: Ապա թէ հասկացալ, թէ ինչ գիշեր էր այն գիշերն և ինչ խորհուրդ ունէին կեանքիս համար այն ժամերը: Արտումս ուժգին մըրիկ բարձրացաւ, մի դառն տանջանք, որից խելքս թռչելու վրա էր, Ես գոռացի, և ձայնս ամայի տան

մէջ արձագանդ տալով՝ զարհուրանք պատճառեց ինձ: Յետոյ ես ընկայ սրահի սառն սաւայտակի վրայ և երեսս տափին տուած՝ մաղերս քաղելով թաւալվում էի, կարծես թէ կամենալով, որ մարմնիս լկանքը լաղթէին միրտս պատառող վշտերին: Իմ առջև ամեն բան մթնել էր աչքերիս արտասուքից, որոնք կաթիլ կաթիլ հոսում էին նոր վէրքի արեան պէս, թէկ ես լաց լինելս չէի զգում: Այսպէս գագանաբար մոլեգնելիս ես յօժար էի մինչեւ անզամ մարդ լինելուց հրաժարուիլ, միայն թէ կարողանայի զրա փոխարէն անզիտակցութիւն ձեռք բերել: Ինչ միտք էլ ծագէր զլխումս, ես ուժգին յետ էի քշում դէպի իմ մէջ շառաչող կատաղի յորձանքը: Ես ուրիշ ոչինչ չէի ուղում զգալ ու մտածել, բայց եթէ այս ամենազմնդակ բանը, թէ նոյն րոպէին, իմ դանձը մէկ ուրիշի ձեռքումն էր: Այս միտքը մի թունաւոր սուսերի պէս ես միշտ նոր ի նորոյ մխում էի սրտիս մէջ, որպէս զի ևս աւելի արիւն քամուէր նրանից: Եւ երբ բոլոր անդամներս ու զգայարաններս մինչի մահ լըլկուեցան, ինքնաճարակ մոլեգնութիւնս սկսաւ մարիլ,— ես փոշու մէջ ընկած՝ զգացի, որ քունքս զովանում էր քարայատակի պաղութիւնից և արտասուքս դադարում էր թափուելուց

Վերջապէս ես այնքան ոգի առի, որ կարողացաւ վեր կենալ, և դանդաչելով պարտէզ գնացի: Այնտեղ շատրուանի ջրով մաքրեցի երեսիս ալտասուքն ու փոշին և կուշտ կուշտ խմեցի այդ ջրից, որ արիւնս հովանալ:

Այժմ կարող էի նաև մտածել, թէ ի՞նչ կար անելու: Սակայն որքան էլ մտածում էի, մի որոշ վճիռ չէր գտնում. միայն թէ հաստատ կամենում էի առաւտեան մի նամակ գըել նրան և աղաչել, որ զոնէ աղատէր ինձ այս սրտամաշ կասկածներից և բոլորովին կտրէր այն կապը, որով կապուած էի իւր հետ: Նրա տոմսակի բառերը վերստին միտքս ընկան: Սակայն ի՞նչ օգուտ, երբ ես ինքս էի աչքովս տեսել նրա դուրս դալն եկեղեցուց և ամբողջ օրն ու գիշերուայ կէսը այսպէս սգաւոր անցկացրել:

Կէս գիշերուայ ժամից յետոյ, երբ լուսինն արդէն ծածկուել էր, ես չկարսղացաւ այլ և մնալ ահարկու ամայութեան մէջ և վերադարձայ դէպի ներս: Այնտեղ մոմ վառեցի և դրի կրակարանի քիւլ վրայ: Յետոյ յառաջ քաշեցի մի աթոռ և գրպանիցս Պանտէի^{*)} դրքոյ-կը հանելով, խորասուզուեցայ նրա «Պժոխքի» ամենամուժ վիհերի մէջ:

^{*)} Երևելի խորական բանաստեղծ (1265—1281):
„Պժոխքը” նրա „Աստուածային կոմէդիայի” մի մասն է:
Ծ. Թարգմ.

Գուցէ մի ժամի չափ այսպէս նստած կը-լինէի, երբ յանկարծ մի ձայն լսեցի պարտէզից և ասես թէ դրսի դրան փականքի մէջ մի բանալիք ճռնչեց: Մազերս փուշ փուշ կանգնեցան. հէնց առաջին սոսկումից ես իրաւ երևակայեցի, թէ խեղճ սիրուհիս ինքն իրեն սպանել էր և նրա անհանդիստ ոգին դալիս է արիւնս ծծելու: Բայց նոյն լոպէին ոյժս հաւաքելով ես վեր կացայ և աւելի ուշադիր ականջ դրի գիշերային խաւարի մէջ: Վանդակաւոր դուռը շաչեց, յետոյ աւազի վրայ քայլեր լսուեցան. միւս վայրկենում սրահի դրան կոթին մի ձեռք դիպաւ, դուռը բացուեցաւ, և շեմքի վրայ կանդ առաւ սկ թիկնոցով փաթաթուած մի պատանեկան երկոյթ: Հէնց որ նա իւր գլխարկը յետ ձգեց, ես նրան ճանաչեցի: Մենք երկուսս էլ մի գոչիւն արձակեցինք և մէկ մէկու դէմ սլանալով փարուեցանք զըրկախառն, ասես թէ մեր կուրծքերն ու շըրթունքը էլ երբէք զատուելու չէին իրարուց:

Վերջապէս նա արձակեց իրեն իմ դրկից և երկար ժամանակ արտասուափայլ աչքերով լովիկ իմ վրայ նայելուց յետոյ, ասաց.

— Ի՞նչպէս գունատ ես դու: Այս բոլոր վշտերն ես եմ քեզ պատճառել: Բայց ահա ամեն բան վերջացաւ: Խօսքս պահեցի. ես քո

կինն եմ, և ոչ թէ ուրիշ մարդու, թէւ այս պատճառով կորչելու լինիմ թէ այս և թէ միւս աշխարհում: Ո՛վ Ամադէօ, ինչո՞ւ այնքան չար են մարդիկ. ինչո՞ւ են նրանք ցեխ ձգում ամեն մաքուր բանի վրայ և հայկոյում ամեն տեսակ սրբութիւն: Ինչո՞ւ են ստիպում մեղ խաբեբայ լինել Աստծու առջև, «այս» ասել շըրթունքով, մինչ դեռ «ո՞չ» է գոռում մեր սիրտը: Նրանք այն տեղ հասցրին ինձ, որ ես ստիպուեցայ երկու մեղքից մինն ընտրել—կամ անձնատուր լինել այն մարդուն, որին ատում եմ, և կամ գիշերուայ զողի նման թաքուն սողալ դէպի քեղ, որ երբէք ինձ պատկանելու չես աշխարհիս առջև: Բայց, Ամադէօ, չէ որ Աստուած ուրիշ չափով է չափում, քան թէ այդ շահասէր մարդիկը: Նա չի ցանկալ, որ ես ուխտադրուժ լինիմ քո առջև, կարող էլ չէ կամենալ, որ մենք կորչինք—ես մի վանքի մէջ թաղուած, իսկ դու անսէր, անսփոփ և միայնակ այս աշխարհում: Նա քեզ ստեղծել է ինձ համար, ինձ—քեզ համար: Դէ առ ինձ, ես քեզ եմ պատկանում: Միւսը մատով անգամ չէ յանդնել ինձ դիպչելու. Երբ որ մեզ մենակ թողին, ես նրան ասացի: Եթէ դուք փորձէք այսօր կամ երբ և իցէ մօտենալ ինձ, ես կըսպանեմ ինքս ինձ: Որովհետև ես երդում եմ

արել Աստուծուն, հէնց նոյն ժամին մեռնելու, երբ դուք համարձակուիք կարծելու, թէ ո՞ր և իրաւունք ունիք իմ վեայ: Այս բոլորը ես դեռ առաջուց ասել էի ձեզ. այնու ամենայնիւ դուք ձեր կամքը կատարեցիք: Այժմ ես եմ ուզում ի մ կամքը կատարել:—Եւ այս ասելով թողի նրան ու փակուեցայ սենեակիս մէջ, մինչև ամենքը քնեցին: Յետոյ Նինան օդնեց ինձ այս տղամարդու շորերը հագնել,—և ահա ես այս տեղ եմ: Ո՛հ, Ամադէօ, քեզ պատկանելու երջանկութիւնս չափազանց կըլինէր, եթէ ես դրան կռուով ու վտանգով ձեռք բերած ըլինէլ:

Նա փաթաթուեցաւ իմ վզին և թաքցրեց ուսիս վրայ իւր բորբոքուն երեսը: Նրա սրտի բոլոր կրակն ու տենչը, որ կուսական հպարտութեամբ զսպել էր մեր նշանտուքի շաբաթներում և մի ակնարկով անգամ չէր մատնել ինձ, այժմ բոցաշունչ հոսանքով դուրս թուաւ ու վառուեցաւ իմ պտոյտ եկող գլխի վրայ:

Երբ որ մենք վերստին խորհելու ու զրուցելու կարողութիւն ստացանք, նա պատմեց ինձ ամեն բան, ինչ որ պատահել էր մ'որ բաժանուելուց յետոյ — խորթ մօր որոգայթները, հօր ապիկար փորձերը՝ ինքն իրեն և իւր զաւակին հզօր եկեղեցականների դէմ պաշտ-

պանելու, վերջապէս և իւր հաստատուն ճշշ-
մարտասիրութիւնը, որով ի զոր ջանացել էր
ամաչեցնել ու զինաթափ անել թշնամիներին:
—Երբ որ տեսալ, ասաց նա, —որ էլ ոչ ոք
օգնելու չէ ինձ, որ ինձ անողորմ կիրապով պի-
տի խլեն հօրս ձեռքից և մի հեռաւոր վանքի
մէջ փակեն, որտեղից մի զիր անգամ չպիտի
կարտանայի հասցնել քեզ, —յանկարծ որոշեցի
հնազանդ երևնալ և այսպիսով փրկել ինձ քեզ
համար: Նրանք զիտէին այդ և կամեցան, որ
այդպէս լինի: Վերջապէս նրանց համար կարևոր
բանը միայն լոկ արտաքին յաղթութիւնն է:
Թէև դրանով հոգիս էլ կորչելու լինէր, նրանց
ինչ փոլթ: Արգեօք նրանք զէթ մի ան-
գամ յանդիմանութիւն արբն խեղճ հօրս անու-
նը կրող կնոջը, որ ազատ ընթացք է տալիս
իւր տարփանքին: Նրանք ամենքն էլ արտա-
քին ձեւի ստրուկ են, որովհետև չեն կարող
հանդուրժել ճշմարտութեան, որ նրանց ամօթ
պիտի բերէ: Ո՛հ Ամադէօ, իս հարիւր անգամ
կամեցայ դէպի քեզ փակին և պարզ խոստո-
վանել աշխարհիս առջև, թէ ես քո ամուսինն
եմ և լինելու եմ յաւիտեան: Բայց դու չզի-
տես, թէ որ քան զօրեղ են նրանք: Թէ որ
մենք այժմ էլ փախչելու լինինք, որ ու զիշեր
արշաւելով, նրանք մեր ետևից կըհասնեն և

անշուշտ կըսպանեն քեզ: Իսկ խեղճ հայրիկս:
Նա չի դիմանալ առանց ինձ, մանաւանդ այս
կերպ բաժնուելով ինձանից: Սակայն մի տրտմիր.
այժմ մենք իրար ենք պատկանում, և այդ ի-
մացողները մեզ հաւատարիմ են: Ներիր, որ գեռ
առաւօտեան չըզբեցի քեզ, թէ գալու եմ: Ես
չգիտէի, թէ արդեօք գալու հնար կըդժնէի և
թէ արդեօք չէր մորթիլ ինձ այն թշուառ,
եթէ հրաժարուէի իմ վրայ տէր ճանաչել նրան:
Եւ եթէ գալս խափանուէր, միթէ այնուհետեւ
դու աւելի սաստիկ չէիր մաշուիլ, քան թէ
անստուգութեան մէջ մնալով, ուր գու դոնէ
մի վկայութիւն ունէիր ինձնից, թէ ես մի-
միսյն քեզ եմ պատկանելու: Այժմ ես ա-
մեն զիշեր քեզ մօտ կըդոցին նի-
նան իմ բացակայութիւնը ծածկելու համար
ննջարանում կըմնայ. դոնապանն էլ իւր տի-
րոջն ատող և քեզ մինչև մահ հաւատարիմ
քաջ մարդ է:

Եո՛ նկատեցի, որ իմ երջանկութեան մէջ
անգամ, — երջանկութեան, որովհետև իմ կնոջը
բռնած ունէի գոգումս, — հանդարտ ու լուրջ
էի նստած:

— Ի՞նչ ունիս, ասաց նա ինձ, ինչու ես
տրտում:

— Որովհետև մենք ստիպուած ենք գողա-

նալ այն, ինչ որ մերն է սուրբ իրաւունքով, — ստիպուած ենք թաքչիլ գիշերային ծածկութեան մէջ, ասես թէ յանցանք լինէր մեր ուխտին հաւատարիմ մնալը:

— Մի մուածիր այդ մասին, ասաց նա, ճակատս շփելով. գալու բաներն ով կարող է գուշակել: Մեզ համար ոչինչ ստոյդ չէ, բայց եթէ այս ժամն ու մեր սիրտը: Ինչու գոհ չըլլինք Աստծուց, որ Նա այսպէս է տնօրինել: Եկ, ես չեմ ուզում սիրուհու նման ձեռքերս ծալած նստել և թողնել, որ ուրիշները հոգ տանեն քո մասին: Դու հարկաւ քաղցած ես. ես էլ ամբողջ օր ու զիշեր բան չեմ դրել բերանս: Ես հօ զիտեմ, թէ որ տեղ են Փաբիոյի պաշարները: Թող սիրելիս, որ վեր կենամ զըրկիցդ: Տես, մի այնպիսի հարսանեկան խնճուք սարքեմ, որ երեկուանից աւելի զուարճալի լինի, ուր զինու ամեն մի կաթիլը ճիշդ լեզի էր խեղճ հօրս համար:

Նա վեր թռաւ ու վազեց դէպի մառանն ու պահարանը: Նոյն միջոցին ես մի սեղան դրի սենեակի մէջ տեղն և փոշոտ ջահերի բոլոր մոմերը վառեցի: Ամաններ ու բաժակներ բերելով յետ զալիս նա մի զուարժ բացազանչութեամբ կանգ առաւ շեմքի վրայ: Յետոյ շտապեց սեղան ձգել և ինքն իւր ձեռ-

քով մի ծանր շիշից մեր բաժակները լքցրեց: — Եկ, գոչեց նա, իսմենք մեր կենացը: Եթէ քոյրդ էլ այս տեղ լինէր, էլ ուրիշ հիւրէի ուզիլ:

Նա քամեց իւր բաժակն և սկսաւ հարկել ինձ, ամանիս մէջ ձիթապտուղ ու միս դնելով, հաց կտրելով և իրրեւ մի հայրէկ գուրգուրալով, որ ուտեմ: Նրա սիրուն ես ամեն բանից ճաշակեցի, թէւ ախորժակ չունէի: Նա ինքն էլ միայն կերակուրների համն էր տեսնում, մինչև ես կշտացրի նրան, իբրև մի երեխալի, սառն խորտիկների ամենաքնքուշ կտորները բերնին բռնելով: Նա ձիծաղելով բաց էր անում շրթունքն և թող էր տալիս, որ ինչպէս ուզեմ, այնպէս անեմ:

— Արդէն կուշտ եմ, ասաց նա և վերկացաւ: Հիմայ ես հոգ կըտանեմ, որ գու մի աւելի լաւ անկողին ստանաս, քան թէ այդ յատակի վրայ փռուած մահիճը: Այսպիվի բաների մասին Փաբիօն ի հարկէ չէ մտածում. Նրա պէս հին զինուորի համար թէ խշտիք թէ փետրի դօշակ—բոլորը մին է: Հարկաւ լաւ կըլինէր, որ գու քնէիր վերեւի սենեակում, որ իմ առազատն է, քան թէ այստեղ, ուր կարող էին տեսնել քեզ ու մատնել:

Մոմերը մարեցինք, և նա թեկիս վրայ

Հենուելով տարաւ ինձ դէպի իւր վերի սենեաշ
կը: Փաբիօյի ննջարանի մօտից անցնելիս ես
կանգ առի ականջ դնելու — արդեօք նա քնած
էր թէ ոչ:

Հանդիստ կաց, շշնջեց Բիչէթթան. իմ
այստեղ լինելս նա զիտէ: Մի ժամ առաջ, երբ
գնացել էր գինի բերելու, նա հանդիպեց ինձ.
Նա զալիս էր պարտէզից, ուր միրդ էր քաղել
մեր հարսանեաց սեղանի համար: Խեղճուկը
լաց եղաւ ինձ տեսնելիս ու սրտագին գորովով
ձեռքս համբուրեց: Այժմ նա չի երեխի և մեզ
արգելք չի լինիլ:

Առաւոտը դեռ չէր լուսացել, երբ Բէաթ-
րիչէն ինքը լիշեցրեց ինձ, թէ արդէն բաժա-
նուելու ժամանակ է: Ես խնդրեցի թողլ տալ ինձ
որ ուղեկցեմ նրան դէպի քաղաք, և նա թողլ
տուաւ, տեսնելով իմ ծպտեալ շորերը, որ դեռ
երէկ հաղել էի գուրու դնալու յանդնելիս: Դա
էլ քաշեց ճակատի վրայ իւր լայն դլխարկն և
փաթաթուեցաւ թիկնոցով. այնուհետև մենք
գուրս ելանք վանդակաւոր դրնից և դիմեցինք
դէպի քաղաքը: Փողոցներում ոչ մարդ կար, ոչ
էլ լոյս էր երեւում. միայն կապուտակ երկն-
քում փալում էր արուսեակն և զովարար քա-
մի փչում: Ամբողջ ճանապարհին մենք մի
բառ. անգամ չասացինք: Սիրտս ճնշուած էր. նա

էլ կարծես թէ միայն այժմ էր զգացել մեր
վիճակի անընական լինելը, այժմ, երբ որ զա-
տուելու էինք իրարուց: Իւր տան առաջեւ, դըռ-
նապանին նշան տալուց առաջ, նա երկար ժա-
մանակ արտասուզ թափելով սեղմեց ինձ իւր
արտին և ասաց. Մինչեւ վաղը: Յետոյ վիզս ար-
ձակեց և արագ ներս սպրդեց կիսաբաց դռնով.
Իսկ ես մենակ մնացի խաւարում:

Մի դառն զգացմունք տիրեց ինձ: Ուրեմն
ես դարձեամ պիտի նրան բաց թողնէի ձեռ-
քիցս, նրան, որ լին էր, որ կամենսւմ էր մի-
այն ինձ պատկանիլ, — թողնէի մտնել մի օտար
տուն, որի դռները յստիտեան պիտի փակ մնա-
լին իմ առջեւ: Ես պիտի կանգնած մնայի այս
շեմքի վրայ և եթէ յանկարծ տանտէրը դուրս
գար, գողի նման թաք կենալի անկիւնի ետև:
Եւ ինչո՞վ պիտի վերջանար այս բոլորը. ինչպէս
պիտի դիմանալի այս տեսակ լարձուն շաւիդ-
ներով անցնող կեանքիս: Միթէ կարելի էր
բախտ համարել մի բան, որ պիտի ամենօրեալ
տանջանքով ու չարչարանքով ձեռք բերուէր:

Ես դեռ վելլան չէի հասել, որ այս ան-
տանելի վիճակին վերջ տալու որոշումս ան-
դըռդուելի արմատ բռնեց մտքիս մէջ: Սիրտս
իսկոյն թեթևացաւ, և միայն այժմ, մինչ անց
էլ կենում արշալուսի մէգով պատաճ ամայի

փողոցներով, — միայն այժմ ես կարողացաւ ու-
րախանալ բախտիս վրայ և կշռել ամեն բան,
ինչ որ պէտք էր անել, որպէս զի այլ ևս եր-
բէք չփախցնեմ նրան իմ ձեռքից: Ես արդէն
պարտէզում զբաղուած գտայ ծերունուն և իս-
կոյն յատնեցի նրան իմ միտքը: Թէև նա
գործը ինձնից աւելի ծանր քննեց, այնու ամե-
նայնիւ վերջապէս յանձն առաւ կատարել, ինչ
որ ես պահանջում էի նրանից — և պահանջածս
թեթև զոհ չէր նրա հասակում, քանի որ մա-
նաւանդ Նինայից էլ պիտի բաժնուէր: Սակայն
այնտեղ, ուր բանը գալիս էր Բիչէթթալին,
նա չունէր ազատ կամք:

Այնուհետև ամբողջ օրը մենք անցկացրինք.
պատրաստութիւն տեսնելով և ես շատ անգամ
առիթ ունեցայ զարմանալու հին զօրականի:
ուշիմութեան վրայ: Կէսօրից յետոյ ես քննեցի:

Գիշերուայ տասներորդ ժամից առաջ ես
արդէն սպասելով կանգնած էի քաղաքի դրան-
մօտ, որտեղից անցնելու էր Բէաթթիչէն: Մենք
պայմանագիր չէինք եղած, որ ես այնտեղ պի-
տի սպասէի նրան. ուստի երբ ես դարանից
դուրս ելայ և մեղմիւ նրա անունը տուի, նա
սաստիկ զարհուրեց: Ես իսկոյն գլխարկս հա-
նեցի, նա ճանաչեց ինձ և վերաբերի տակից,
պարզեց ինձ լւր աջը, որ դեռ դողում էր, և

այդպէս մենք յառաջ գնացինք, լուիկ իրար
ակնարկելով, որովհետև մեր կողքով անցնում
էին դեռ քաղաք վերադարձող զանազան մար-
դիկ, որոնք կարող էին կասկածի գալ, եթէ
յանկարծ տղամարդու լայն գլխարկի տակից մի
քնքուշ ձայն դուրս հնչէր: Բէաթթիչէի լեզուն
միայն պարտէզի լուսաւոր սրահին հասնե-
լուց յետոյ բացուեցաւ: Նա պատմեց ինձ, թէ
հալումաշ սրտով էր անցկացրել այն երկար ու
տաղտկալի օրը. — թէ Ռիչինօն շատ սառն էր
ցոյց տուել իրեն, թերեւս յուսալով, որ այդ
կերպով կարող կըլինէր ընկճել նրան ու ստի-
պել որ զիջանի. — թէ նա մի երջանիկ նօրատի
ամուսին էր ձեւացել ծնողների ու հիւրերի առ-
ջև, իսկ երեկոյեան դէմ առանց մի բառ ասե-
լու հարսին՝ զլուխ տուել և իսկոյն իւր սե-
նեակի մէջ փակուել:

Երկար ժամանակ լուռ կենալուց յետոյ ես
յանկարծ ասացի. — Բանը չէ կարող այսպէս
մնալ. այս վիճակը ոչ քեզ է վայել, ոչ էլ ինձ:
Պիտք է անշուշտ վերջ տալ սրան. հարկաւոր
է միայն քո վճիռը. իմս արդէն սահմանուած է:
— Ամադէօ, գոչեց նա, վրաս մեծ մեծ նա-
յելով: Ի՞նչ է միտքդ: Բաժանուիլ: Լաւ է սպա-
նիր ինձ:

— Ոչ, ասացի ես. մի վախենար: Գերմարդ-

կալին բան չեմ ուզում ոչքեղնից, ոչ էլ ինձնից: Քեզ
թողնել, որ իմ կինն ես, իմ երկրորդ եսը — լիրա-
ւի այդ մահ կը լինէր: Բայց մեր արդի վիճակը
մահից էլ վատ է, այս վիճակը մեր հոգիների
աղատութիւնն ու աղնւութիւնը սպանում է և
դէպի կարուստ է տանում մեզ: Եւ դիցուք թէ —
ինչ որ սակայն մտածել անգամ անհնարին է, —
ես յաջողէի տարիներով ալստեղ ծածուկ մնալ:
Ի՞նչ կը լինէր այնուհետև իմ կեանքը, ո՞ր աս-
տիճան գատարկ կը լինէին իմ օրերը, որ ես —
բոլոր աշխարհից, բացի քեղնից, անջատուած,
կեանքիս նպատակներից վրիպած, — չարաչար
տանջուելով անխորհուրդ վատնելու էի այս մե-
նութեան մէջ: Սակայն ենթագրենք, թէ ես
աւելի լաւ պայմանների մէջ կը լինիմ, այսին-
քըն՝ քո տունը մտնելու և կավալերդ լի-
նելու աղատութիւն կ'ունենամ, — այնու ամե-
նայնիւ իմ բնութիւնն այնպէս է, որ ես չեմ
կարող ստութեան ու կեղծաւորութեան համբե-
րել: Ես սովոր եմ խոստովանել, ինչ որ զգում
եմ, իմ անուանել, ինչ որ ինձ է պատկա-
նում: Արդեօք միտքս հասկացա՞ր:

Նա թօթուեց իւր դլուխն և ակնկոր վայր
նայեց մտածերավ:

— Գիտեմ, որ քեզ դժուար կը լինի, շա-
ռունակեցի ես և բռնեցի նրա ձեռքը, որ բո-

լորովին պաղ էր և անկենդան: Դու ընդ միշտ
պիտի հեռանաս այստեղից, էլ երբէք չտեսնես
հօրդ, եթէ նա էլ սիրտ չանէ մեղ մօտ գա-
լու, — թողնես հայրենիքդ և ամեն բան, ինչ որ
վաղուց սիրելի էր քեզ, և էլ ծունը չըդնես այն
տեղում, ուր որ աղօթել էր մայրիկդ: Դու սար-
սափում ես օտար աշխարհից, ուր որ իբրև
փախստ ական պիտի զնաս, մինչ կ'ուզէիր
պատուվ ու պարզերես մուտք գործել, և կար-
ծում ես, թէ մինչև անգամ քեզ սիրող մարդ-
կանց առջև ստիպուած կը լինիս ամօթով աչ-
քերդ խոնարհել: Այսպէս չէ, բէաթրիչէ:

Նա վերստին շարժեց զլուխն և աչքերը
վրաս շեշտելով, ասաց.

— Պատրաստ եմ ամ են թան անել,
միայն թէ դու երջանիկ լինէիր:

— Հոգեակ իմ, գոչեցի ես և պատեցի նրան
զրկիս մէջ, — դու ինձ հաւատում ես, չէ, հա-
ւատում ես, թէ ես արդէն լաւ եմ կշռել, ինչ
որ պարտական եմ քեզ ու ինձ, և թէ վախե-
նալու չեմ ոչ մի զոհից, քանի որ դա արատ
չբերէ իմ պատուին և չնուաստացնէ ինձ քո
առջև: Արդ թշնամիների մեր վրայ դրած շըդ-
թաներից աղատուելու համար միայն մի հնար
կալ մեր ձեռքում: Դու լիրաւ ասացիր, թէ
սրարշաւ ձիերով անգամ չէինք կարողանալ

պրծնել այստեղից. ուստի մեզ պէտք է ե՞ս աւելի զգոյշ լինել, որ նրանք չկասնեն մեր ետևից: Ես արդէն խօսել եմ Փաբիոյի հետ. Անկօնա տանող անցքերն ու շաւիղները նրան իւր պարտէզից լաւ են յայտնի: Նա կ'առաջնորդէ մեզ. մենք հետի կ'երթանք, միայն զիշերով, երեքս էլ շինականի շորեր հագած, և այնտեղից կընաւենք դէպի Վենետիկ: Մեզ ազատ ու բախտաւոր տեսնելու համար նա էլ յօժար է թողնել այստեղ, ինչ որ թանգ ու սիրելի էր իւր սրտին: Արդեօք քաջութիւն և ոյժ ունիս, սիրելիս, այս երկար ճանապարհն ամուսնիդ հետ կտրելու.

— Ունի՞մ, թէկուզ մինչև աշխարհի ծայրը գնալու լինէի, ասաց նա և աջս սեղմեց: Ես քեզ տեղիք չեմ տալ իմ վրայ գանգատելու. ես ամեն բան կարող եմ անել, ինչ որ դու ինձ հաւատում ես:

Ես համբուրեցի նրան բուռն յուզմունքով: — Ե՛կ, ասացի ես յետոյ և վեր կացայ: Արի մի բան ուտենք և կաղդուրուինք ճանապարհի համար:

Նա շրտնեց: — Միթէ այսօր իսկ, Ամադէօ: Աղաջում եմ քեզ հոգուս բոլոր զօրութեամբ, այս միայն մի պահանջիր, որ ես մեկնիմ վերջին անգամ խեղճուկ հօրս չտեսած և հետո

չառած իմ մօր յիշատակները, որ պահած եմ սենեակումս: Երդվում եմ քեզ, որ էլ ոչ մի բանից յետ չեմ կանգնիլ, ոչ մի կաթիլ արտասուքով չեմ մատնիլ ինձ, — երբ որ հօրս վերջին համբոյր տալու լինիմ: Սակայն զգում եմ, որ նրան այս համբոյրը չըտուած, նրան գէթ մի մնջիկ բարեւ մնաց չասած՝ ես ոչ մի աեղ հանգտութիւն չեմ դտնիլ և կեանքս իսպառ կըմաշուի նրա կարօտով: Ի՞նչ վտանգ ես գուշակում: Մի մարդ անգամ չգիտէ, որ դու այստեղ ես. իմ գալն ու գնալը ոչ ոք չէ տեսնում: Ես նինային անգամ բան չեմ ասել, և երբոր վաղն երեկոյեան տանից դուքս զամ, արդէն ամեն բան մշտապէս թողած կըլինիմ — հաւատած խօսքիս: Միայն տուր ինձ դեռ մի քանի ժամ, որ ամեն բան վերջացնեմ: Այնուհետև ես քոնը կըլինիմ՝ ուղիղ երկնքից գրկիդ մէջ ընկածի պէս, և ուրիշ հայրենիք չեմ ունենալ, բայց միայն քո սէրը:

Նա այնպիսի հայեացք ձգեց իմ վրայ, ու ըին չէր կարելի լնդդիմանալ: Ես յօժարացայ, և իմ մռայլ մտքերն իսկոյն փարատուեցան նրա զուարթութիւնից: Մենք միասին ընթրեցինք, Փարիօն մեզ սպասաւորեց, և մեր գիտաւորութեան մասին էլ ոչ մի խօսք չասացինք: Յետոյ ես արձակեցի ծերուկին, որ քնե-

լու գնայ, և ինքս ներս տարայ վոքրիկ սեղանն և մի շիշ անոյշ զինի, որ Բէաթրիչէն սիրով խմում էր մի մի կաթիլ. բայց այդ կաթիլներն էլ բաւական էին, որ նրա գունատ դէմքը կարմրէր: Ո՞վ կրկարծեր մեղ այսպէս մօտ առմօտ սեղանի զլիկն նստած տեսնելիս,—մինչ նա իւր արական շորերով և միայն թէ մաղերն ազատ ուսերի վրայ բաց թողած, յանկարծ շորթում էր իմ շրժունքից բաժակը, որ ինքն ըմպէ, ուտում էր իմ ամանից, յետոյ նարնջի կճեղ էր նետում կատուի վրայ, և երբ սա թուչկոտում էր, արագ համբոյր էր տալիս ինձ, ասես թէ մի երրորդ մարդ երեսը մեզնից դարձրած լինէր և մենք այլ ևս իրարուց քաշուելու տեղիք չունենալինք,—ով կ'ենթադրէր, թէ մենք, վտանգներով պաշարուած՝ թաքուն յափշտակել էլնք այն ժամերն և զողի տօն էլնք կատարում այն զիշերը:

Նա վերկացաւ ու տարաւ. ինձ դէպի պարտէզ:—Թոյլ տուր ինձ, ասաց նա, որ հրաժեշտ տամ իմ սիրուն ծառերին, նունենուն, նարնջենուն ու շատրուանին. վաղն ժամանակ չեմ ունենալ:

Մենք գնացինք թև թևի տուած: Նա չուր խմեց մարմարեալ աւագանից, մի նարինչ զրաւ զրպանի մէջ և մի ոստ քաղեց նունե-

նուց:—Թող սրանք էլ հետո գան. ասաց նա. այսպիսի բաներ չկան քո հիւսիսում: Փոյթ չէ, կըհամբերեմ: Հավա այս դնդակը, —և նա վերցեց զնդակը, որ արօտի մէջ ընկած էր մնացել, —ես չեմ թողնիլ սրան: Յետոյ ինձ կպչելով աւելցրեց. Մեր մանուկները սրանով կըխաղան և դու կըպատմես նրանց, որ մի այսպիսի դնդակի հետ վոխանակեցիր քո սիրտը:—

Մենք հասանք այնտեղ, ուր ես առաջին անդամ ներս էի նայել որմի վրալից: Բարձր ոստերի տակ կանանչ արօտը դեռ թարմ ու վափուկ էր. մենք զով ու մաքոր օդ էինք շնչում:—Ներս մտնենք, ասացի ես: Ես կըբերեմ մի վերմակ ու դալարի վրայ կըփռեմ: Այստեղ մեր հանգիստն աւելի անոյշ կըլինի, քան թէ մղձկուտ սենեակում:

—Գէ լաւ, ասաց նա: Գեռ աղջիկ ժամանակս ես շատ անդամ քնել եմ այստեղ զիշերով. Նինան դնում էր իւր արմուկը զլիխս տակ, և ես տերւեների միջից լուսնեակին նալելով աչքերս վակում էի:

Ես դսւրս բերի մի զոյգ բարձ ու նրա վերաբկուն. նա հանգիստ պառկեց և ամենի կըսըն ինձ տուաւ: Մեր զլիխն ոչ մի ձայն չէր հնչում, արևի տապից յոդնած տերեները անշարժ էին, —միայն շատրուանն էր կար-

կաջում: Ես գեռ չէի կարողանում նվրհել, թէ և նորատի կնոջս հեղիկ շնչառութիւնն իմ կողքին վաղուց արդէն հրաւիրում էր ինձ հանզեղու: Նա մի երկու անդամ խօսեց երազում. ես չասկացայ բառերը. բայց գեռ այժմ էլ լսում եմ նրա անմեղ ձայնն և տեսնում նրա երեսը, որ փակուած կոպերով, հարցական յօնքերով ու խորհրդաւոր ժպտով դէպի երկինք էր նայում, ասես թէ այնպիսի բաներ երազելով, որոնց վրայ ինքն էլ հիացած էր, և որոնք սակայն աւելի երանաւէտ էին, քան թէ այն բոլոր բաները, ինչ որ երբ և իցէ վայելել էր իւր կեանքում:

Վերջապէս իմ քունն էլ տարաւ:

Երբ որ ես զարթեցայ—զգիտեմ քանի ժամկ յետոյ, բայց երկինքը գեռ չէր կարմրել—մենակ գտայ ինքս ինձ և չկարողացայ իսկոյն մտաբերել, թէ ինչպէս էի այնտեղ եկել: Յետոյ զարհուրեցայ, որ նա իմ կողքին չէր այլ ևս: Ինչու էր թաքուն փախել: Ես վեր թռայ նայելու, թէ արդեօք չէր գնացել ծերովի հետ: Բայց մի քանի քայլ արել էի թէ չէ յանկարծ դրսի դրան զանգակը սաստիկ հնչեց, և նոյն ակնթարթում սրտիս մի այնպիսի ահաւոր զգացմունք տիրեց, որ ես ամեն զգուշութիւն մոռացայ և ուղիղ պարտէզի միջով դէպի ար-

տաքին դուռը վաղեցի: Այնուամենայնիւ ծերունին ինձնից առաջ էր այնտեղ հասել: Հենց որ ես տան անկիւնի ետևից դուրս ելայ, տեսայ որ նա, վանդակաւոր դրան մօտ կանգնած, վայթ էր տանում մի սկզբանցին վերցնելու, որ ընկել էր զբառում շեմքի առջև:—Բէաթրիչէ, զոչեցի ես ու տացայ դէպի նա: Կոյն բռպէին, Փարիօլին յենուելով, նա բաց արաւ աչքերն և ամենախորին վշտակրութեամբ և յուսպահատ ինձ վրայ նայեց: Յետոյ իսկոյն փորձեց ժպտել:

—Բան չկայ, Ամագէօ, հեկեկաց նա դըժւարութեամբ, ձեռքը սրտին դնելով: Ես ոչ մի ցաւ չեմ զգում, մի խուճապիր: Բարկանում ես, որ հեռացայ առանց քեզ զարթեցնելու: Դու այնպէս քաղցր քնած էիր, և ես կարծում էի, թէ վտանգ չկար: Եւ ինչպէս ին իմացել նրանք, որ դու այստեղ ես: Բայց այս, ես մոռացայ քեզ պատմել, որ երէկ կէսօրին Ռիչինօն հարցել էր ինձ ֆրանսերէն, որ ինձնից զատ ոչ ոք նրան չկատկանայ, Տիկին, արդեօք դուք ուրուականների հաւատում էք: Եթէ նրանք իրաւ կան, ուրեմն թող երևան, որքան և կամենան: Բայց եթէ կենդանի մարդիկն էլ ուզենան ճիւաղ ճեանալ,—պատիւս վկայ է, —ես նրանց իսկոյն ստուեր դարձնելու փոլթ

կըտանեմ: — Ես կարծում էի թէ այդ խօսքերը
յոկ բառեր էին: Ախ, Ամագէօ, այժմ հարկաւ
ես չեմ կարող քեզ հետ միասին ճանապարհ
ընկնել, այժմ պէտք է, որ դու մենակ դնաս
և խօլոյն: — Այն երկուոր, որոնք դարձնել էին
դրսում, անշուշտ կարծած կըլինին, թէ դու
կ'անցնէիր գրան միջով: Գեռ ես տասն քայլ
էլ չէլ արել, —և ահա նրանք ձայն տուին, որ
անունս ասեմ: Ես լուռ մնացի, և նրանք արին,
ինչ որ իրենց հրամայուած էր: Բայց լաւ չդի-
պան. տես, ես կարող եմ դեռ ման գալ, մին-
չե անդամ և խօսել:

Թող ինձ այս տեղ և անհոգ եղիք. ես
չեմ մեռնիլ, սինչև չիմանամ, որ դու վտան-
գից ազատ ես: Գնա, սիրելիս —քանի որ չէ
լուսացել —աշդ —շրթունքդ —

Այստեղ նրա ձայնը հատաւ, ծունկերը
դուռ եկան. մենք նրան ուշաթափ դահլիճ
տարանք և ցած անկողնի մէջ դրինք: Եւ հէնց
որ նրա վերարկուն ու պարեգոտը բաց արինք,
արիւնը մեր ձեռքերը որսկեց: Ես խոնարհեցայ
դէպի նա, նա մի ուժզին լոզւոց հանեց, աչ-
քերը վերջին անգամ իմ վրայ շեշտեց, յետոյ
յետ ընկաւ —և լոեց ընդ միշտ:

Թող տուէք, որ էլ բան չասեմ այդ ա-
ռաւոտեան մասին:

Երբ որ արեղակը պատուհաններից ներս
նայեց, ես գեռ պառկած էի յատակի վրայ նըա-
մահնի մօտ և անթարթափ աչքերով պշնած
նայում էի նրա գժգոյն երեսին: Ալեւը մի
անկիւնում կարկամտծ տուսիկ արտապում էր:
Յանկարծ մի ձայն հասաւ գրակց, որ նէաթ-
րիչէի անունն էր տալիս. նոյն ըոպէին ներս
վազեց նինան և ճիչ հանելով ընկաւ մեռելի
վրայ, առես թէ ինքն էլ մի մահացու վէրք
ստացած լինէր: Յետոյ իւր աղեկէզ ցաւը փոքր
ինչ զսպելով, դարձաւ դէպի ինձ և ասաց.—
Չեղ խօլոյն սկտք է հեռանալ: Ես միայն ձեզ
և որան զգուշացնելու համար եմ եկել. որով-
հետեւ թիշնօն մտել էր որա ննջարանն և
պտրում էր որան — այժմ զիտեմ թէ ինչու—
ասելու համար, որ դուք կենդանի չէք այլ ևս:
Նա հարկաւ չզիտէր, որ բանն այնպէս կըվեր-
ջանար: Երբ որ որան առաջատում ըզդտաւ,
երեսի գոյնը հատած՝ դուրս վազեց սենեակից:
Սակայն հաւատացէք ինձ, նա այստեղ էլ կը-
գայ նիչէթթային որսնելու, և երբ որ տես-
նէ դրսում այն զարհուրելի հետքերը, —լսիր, ա-
հա քայլեր են գալիս. այս նա է: Փախէք,
թէ չէ մեռած էք:

Ոչ մի պատասխան չտուի. այլ ոտքի ելայ
և կանգնած մնացի իմ անշունչ ամուսնի կող-

քին: Յանկարծ դուռը բացուեցաւ և թիջինօն ներս մտաւ:

Ի՞նչ էլ մտաղիլ լինէր ներս մտնելիս անելու, — տեսարանը քարացը նրան: Նա երերաց դէպի յետ ու դիպաւ դրան սեմին: Նրանիշար դէմքն ևս աւելի խանդարուեցաւ անհնարին սարսափից. տեսայ, որ հազիւ էր շունչ քաշում:

— Ի՞նչ էք որոնում այսուեղ, ասայի ես վերջասկ, ո Դուք յոյս ունէիք ինձ դտնելու արիւնիս մէջ. ձեր արբանեակները շուտ կատարեցին ձեր հրտմանը, բայց ափսոս որ սխալուեցան անձի մէջ: Դուք արժանի չեղաք ձեր չար փափազին հասնելու, որով կամենում էիք պսակել ձեր դորձն և լուր բերել այս խեղճ սրբուն, — որի արեան կաթիներից և ոչ մէկը չէր պատկանել ձեղ երբէք, — թէ նրա սիրելին սպանուած է և էլ չսիթիվ վերադառնայ: — Ի՞նչ բան կարող է արգելել ինձ, շարունակեցի ես նրան մօտենալով ու տաժանելի ցաւից կուռիներս մոլեգնաբար հուզ տալով, — Ի՞նչ բան կարող է արգելել ինձ ջախջախելու քեզ, ով թշուառ, և ոտնհար դուրս ձղելու քեզ այս շեմքից, որ դու այլ ևս չապականես շնչովի մահուան այս սուրբ տաճարի օղը: Երանի դէմք ինչ սրան սիրած լինէիր, ողորմելի դու,

դէմք որ և է մարդկալին զդացմունք ունեցած լինէիր քեզ արդարացնելու համար: Բայց սրան ըսնի դէպի քեզ քաշել, այս արքայական էակը մինչեւ քեզ նուաստացնել — միայն թէ սկալշոտ սենդիդ յազուրդ տալու և որիշների սակրանքին հնապանգելու համար — կորիք, ասում եմ, ծածկիր երեսդ յաւիտենական խաւարի մէջ, ով մարդասպան, վասն զի երգվում եմ, որ եթէ ձեռքդ դէպի այս մեռելը մելնես, և կամ մի ակնտրկ ձղես գրա վրայ, ես քեզ կը յօշատեմ ձեռքերտիս: Կորիք:

Այս սանձակատոր կատաղութեանս մէջ ես յանկարծ կանգ առի, տեսնելով նրա դէմքը, որի վրայ ամենախորին վհատութեան նշան փայլեց, ասես թէ զետինը տատանում էր նրա ոտքերի տակ և կամենում էր պատառուելով կուլ տալ նրան: Առանց ոչ ոքի վրայ նայելու նա փորձեց հաւաքել իւր ուժերն և շանթահարի պէս թաւալ զլոր վայր ընկաւ շեմքի վրայ, ուր և մնաց մի քանի ըսպէ: Ես շուռ եկայ նրանից, որովհետեւ զրեթէ մի տեսակ կարելցութիւն տիրեց սրտիս: Երբ որ ես այնքան զզաստացայ, որ կամենում էր վերջին անգամ բան ասել նրան, աեսայ որ նա բեկուած ուժով, զինեհարի պէս տատանուելով, դուրս էր դնում և հուանում պարտէ զից:

Այնուհետև Նինան հանեց մեռելի արական շորերն և պատեց նրան այն զղեստով, որ նա հազած էր առաջին անգամ ինձ երկելիս։ Այսպէս՝ հանդարտ ժպիտն երեսին՝ պառկած էր նա հաւատարիմ ընկերուհու բերած դոյնդոյն ծաղիկների տակ։ Սա դեռ նոր էր աւարտել իւր սիրոյ վերջին պաշտօնը, և ահա դրսից կառքի դղրդիւն լսուեցաւ։ Կառքիր մէջ նաստած էր հայրը՝ երեսը գեղին, ժպիտը մոլոխ, շրթունքը թօշնաց։ Փարիօն չերմ արտասուք թափելով օգնեց նրան սրահ մտնել։ Խեղճ հայրն իւր գառակին պաճուճած տեսնելուն պէս՝ անմոռունչ ընկաւ նրա կշտին և իւր մերի ճակատը նրա խաչաձեւ ձեռքերին սեղմեց։ Վերջապէս, մինչ կամենում էինք վերցնել նրան, տեսանք որ մի բարեգութ սրտի հարուած ընդ միշտ միացրել է նրան իւր սիրասուն գստրիկի հետ։

Յաջորդ զիշերը մենք թաղեցինք երկու-
մին էլ միատին։ Փարիօից և Նինայից զատ ոչ
ոք այդ հանդէսին ներկայ չէր։ Մեռելներին
որհնեց Թօն Ակչլիիօն։ Յետոյ նա ինձ պատ-
մեց, թէ Թիջինօն հրամայած է եղել ամեն բան
ինձ յանձնելու, իբրև բուն տանտիրոջ, և թէ
ոչ ոքի թոյլ չէ տուել իւր մօտ մտել և իւր զո-
քանչի հետ սաստիկ կոռուելուց յետոյ՝ նոյն օրն իսկ
չոռմ է զնացել։ Իսկ զոքանքը վանք է մտել

և կամեցել է այն տեղ անցկացնել իւր սզաւոր
տարին։ — Ես ինքս էլ, երկուսի գերեզմանը փա-
կեցի թէ չէ, նժոյգ վարձեցի և դեռ գիշերով
դէպի Ֆլորէնցիա արշաւեցի։ Մի տարուց յե-
տոյ ես կարգացի լրագիրներում, որ զօրավարի
կինն արդէն ամուսնացել էր իւր հաւատարիմ
սիրահար՝ երիդասարդ կոմսի հետ։ Այնուհե-
տեւ ես շատ անգամ Բօլօնիա գնացի գերեզ-
մանը տեսնելու համար, բայց էլ երբէք չպա-
տահեցայ ոչ կոմսին, ոչ էլ նրա կնոջը։

զուսպի դր թերապևտ բայ մու ժամանեած ա-
ռաք զմակացներ շնորհի վե ով մի աշ ։ ամպառ
խոնքն ու ու և գրմանի բան ու և Ան վաճ
մի բարյա ԱՄ ։ զրաւացն ամպ մօքն պայք պայքացը դր հուղարձուաց հուրցաւ ու լու
Խըդաւաւ գր ու թերապևտ մ. իրա մօքն
մարտի ։ ամ զաք բաւարար պաշտօքն ըստացի
-քեցն ։ իրած ամբողջ եացն ու ու և ան
-արդ գեց և բայ ըստա ապման զաք
-ուսութ ու չ չ ամբար չ բավարա

801 - 24 JAN 2013

ուստի ովք թմբացնեան ըստ օրու Եպիսկոպու և
առօղջ զմանեալու վայսից առաջի ու առջևուն
խոյցից ուր և պահպան բան է ։ Այ գոյն
մի ըստուն վայսիցն այս մասին պահպան
իրավունք ու հայոցային ժամանակակից մասուն
աշխարհու ու զերպահանու ամրացն առաջ
արդար առաջ այս պահպանու ամրացն առաջ
աշխարհու առաջ այս պահպանու ամրացն առաջ
աշխարհու առաջ այս պահպանու ամրացն առաջ
աշխարհու առաջ այս պահպանու ամրացն առաջ



602

Փ. Վարդանեանի Թարգ

նբատարակած գրքուրը.

	թ.	դ.
1. ԳՄԻԴԹ, Ֆրանկին, 2 տիպ. սակաւաթիւ .	—	40
2. ————— Վաշինգտոն, 2 տիպ.	60	
3. ————— Հոմերի Եվականը, պատկերներով .	1	—
4. ————— Հոմերի Ողիսականը,	1	20
5. ՍՄԵՅԼՈ, Բնաւորութիւն	1	50
6. ԷՄԻԶԻՍ, Սիրտ.	1	—
7. ————— Ապէնիններից մինչև Անդերը	—	20
8. ԹՈՒՍՏԵՄ և Զոհրաբ	—	20
9. ՋԵԼԼԵՐ, Աւագակներ. ողբերգութիւն	—	50
10. ՍՄԵՅԼՈ, Խընօքնութիւն	1	50
11. ՏՈՂՈՏՅ, Ռոբինզոն, փոքր. համար	—	20
12. ————— Կոլումբ, փոքրերի համար	—	15
13. ՀԱՅԶԵ, Քէաթրիչէ, վեպիկ.	—	30

(Ճանապարհի ծախսը թարգմանչի վրայ է):

Վաճառվում են թարգմանչի մօա՝ Տիֆլիս, Սաдовая,

Մարիոպ-Անառուսկու առողջապահութեան համար:

Կենդրոնսական գրավաճառանոցում:

Մամուլի տակ է

ԳՄԻԴԹ, Խորամանց Աղուէսը:

ՀԱՅԶԵ, Խօնցայի թէրդը:

ՎԵԼԻՆԵՐ, հաւասարից Սալիսբին:

63090